Ազգ
Azg
15 ՆՈՅԵՄԲԵՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 205(4823)
ISSN: 1829-1651

# Քեթրին Էշթոնը այցելում է տարածաշրջան՝ նաեւ ԵՄ-ով «փոխարինելու» համանախագահող Ֆրանսիայի՞ն

Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ, բարոնուհի Քեթրին Էշթոնը Հարավային Կովկասում կլինի Բաքու, ապա Թբիլիսի եւ Երեւան այցելությամբ արդեն այսօր, Հայաստան այցելելով նոյեմբերի 16-17-ին Թբիլիսիից:

Վրաստանում ԵՄ ներկայացուցիչը, հանդիպումներից զատ, փաստացի մասնակից կդառնա Վրաստան-ԵՄ ասոցացման համաձայնագրի բանակցությունների մեկնարկին: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության տեղեկացմամբ՝ Էշթոնը Երեւանում հանդիպումներ կունենա հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների ընթացքում գերագույն ներկայացուցիչը կքննարկի զալիք ընտրությունները, Հայաստան-Եվրոմիություն հարաբերությունները, ներքաղաքական իրադրությունը, տարածաշրջանային հարցեր, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը եւ հայ-թուրքական հարաբերությունները:

Առավել հետաքրքրական է, թե ղարաբաղյան հարցի առնչությամբ ինչ առաքելությամբ ու կոնկրետ մոտեցումներով է բարոնուհին գալիս տարածաշրջան, քանի որ Էշթոնից առաջ Երեւան այցելած Եվրոպական խորհրդարանի անդամ, Եվրոնեսթի նախագահ Քրիստիան Վիգենինը նախորդ ուրբաթ Հայաստանի նախագահի հետ հանդիպումից հետո հայտարարել էր, թե Եվրոպայում գոհ չեն ղարաբաղյան գործընթացի լճացումից:

Էշթոնը հաստատապես գոնե հայաստանյան եւ ադրբեջանական իշխանություններին որեւէ ասելիք պիտի ունենա, քանի որ, ըստ Վիգենինի երեւանյան հայտարարության, ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեւաչափը արդյունք չի գրանցել նախորդ տարիներին, ուստի ինչ-որ բան պետք է փոխվի: «Փոխվի» ասելուց առաջ էլ Վիգենինը բավականին բաց տեքստով նշել է, որ Եվրոմիությունը պետք է ներգրավվի ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, դիտարկմամբ, որ այդ գործընթացում պետք է «նոր խաղացողներ» ներգրավվեն: Գոնե այս պահի դրությամբ՝ նոր խաղացողներ ասվածը պետք է ընկալել Եվրոմիությունը, թեեւ Վիգենինը կարող էր նաեւ այլոց նկատի ունենալ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ի վերջո ո՞վ է լինելու ԱԺ նոր նախագահը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Չնայած երեւակայության պակաս չունեցողների զանազան սցենարներին՝ ոչինչ չէր փոխվել նախնական սցենարից, եւ ինչպես սպասվում էր՝ ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանը** երեկ սկսված ԱԺ քառօրյայի սկզբում հանդես եկավ արտահերթ ելույթով եւ հրաժարական ներկայացրեց: Նա նշեց, թե ՀՀԿ նախընտրական շտաբը ղեկավարելու եւ ընտրությունների կարեւոր գործին նախապատրաստվելու համար որոշել է վաղաժամ վայր դնել ԱԺ նախագահի լիազորությունները՝ լիովին գիտակցելով ողջ պատասխանատվությունը Հայաստանի նախագահի, ժողովրդի եւ կուսակցության առջեւ. «Թող անհամեստ չհնչի, բայց կարծում եմ, որ մեզ հաջողվել է ապահովել խորհրդարանի հնարավորինս թափանցիկ գործունեությունը եւ սերտացնել խորհրդարան-հասարակություն կապը», ասաց նա՝ 2008 սեպտեմբերից մինչեւ օրս իր նախագահած ժամանակահատվածի համար նշելով, որ Ազգային ժողովն իրեն դրսեւորել է որպես պետականության կայացման գործընթացի ակտիվ մասնակից, իսկ ինքը ԱԺ նախագահի պաշտոնում գործունեության ընթացքում մշտապես առաջնորդվել է հանդուրժողականության, փոխադարձ հարգանքի սկզբունքներով: Նա նաեւ տեղեկացրեց, թե մեծամասնական ընտրակարգով ընտրված լինելով՝ չի խուսափելու ընտրողների առջեւ սպասված պարտականություններից եւ պատգամավորական պարտականություններից, այսինքն, հայերեն ասած, պատգամավորական մանդատը վայր չի դնում. «Կարծում եմ՝ բոլորին էլ հասկանալի է, որ մեր երկիրը մտնում է հերթական խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական փուլ, ընտրություններ, որոնք բարձր մակարդակով կազմակերպելն ու անցկացնելը բոլորիս եւ հատկապես իշխանությունների պատվի գործն է: Ես պատահաբար չեմ օգտագործում «բոլորիս» բառը, քանի որ ընտրությունների բացասական հետեւանքը հարված է ոչ միայն իշխանությունների, այլեւ ամբողջ երկրի հեղինակությանը: Իշխանությունները բազմիցս են հայտարարել ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու պատրաստակամության մասին, ինչը նշանակում է, որ դրա համար կա անհրաժեշտ քաղաքական կամք եւ հաստատակամություն»:

*Տես էջ 2*

# Արթուր Չիլինգարովը դարձել է ՌԴ սենատոր



**Տուլայի մարզի նահանգապետ Վլադիմիր Գրուզդեւը Դաշնության խորհրդի անդամ է դարձրել Պետդումայի նախկին պատգամավոր Արթուր Չիլինգարովին, հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:**

**Նոյեմբերի 11-ին Չիլինգարովը ստացել է Տուլայի մարզի Ալեքսիեւսկի շրջանի Սոլոպենկի գյուղի խորհրդի պատգամավորի վկայական: Նա հաղթել է այլընտրական ընտրություններում:**

**Ներկա օրենսդրության համաձայն, Դաշնության խորհրդի անդամ կարող է դառնալ տեղական կամ տարածաշրջանային մակարդակի պատգամավորը: Բացի դրանից, ԴԽ կարող են անցնել Պետդումայի պատգամավորները, բայց տվյալ ձեւով սենատոր կարելի է դառնալ միայն այն տարածաշրջանից, որտեղից պատգամավորը մտել է խորհրդարանի ստորին պալատ: Չիլինգարովը չկարողացավ օգտվել այդ իրավունքից, քանի որ Տուլայի մարզից չէր ընտրվել Պետդումայում:**

**Հոկտեմբերին Գրուզդեւը ԴԽ-ից հետ է կանչել սենատոր Անատոլի Վասկովին, որին այդ լիազորությունները տվել էր Տուլայի մարզի նախկին նահանգապետ Վյաչեսլավ Դուդկան:**

**Գրուզդեւը եւ Չիլինգարովը բարեկամներ են, միասին մի քանի անգամ եղել են բեւեռային գիտարշավներում: Արթուր Չիլինգարովը Պետդումայի բոլոր հինգ գումարումների պատգամավոր է եղել: Նա ՌԴ եւ ԽՍՀՄ հերոսի կոչումներ ունի բեւեռային գիտարշավներում կատարած աշխատանքի համար:**

# «Լիսկան» ծեծել է Սիլվա Համբարձումյանին

Ըստ նորաբաց Առավոտ.am կայքի, ինչպես նաեւ այլ աղբյուրների՝ երեկ «Մարիոթ» հյուրանոցում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը (մականունը՝ Լիսկա), ոչ ավել, ոչ պակաս, ծեծել է օրեր առաջ իրեն գողության մեջ մեղադրած գործարար Սիլվա Համբարձումյանին: Տարբեր ժամանակներում մամուլը գրել է այս քաջարի մարզպետի բազմաթիվ «սխրագործությունների» մասին, հիմա դրանց ավելացավ նաեւ կին գործարարի հետ հաշվեհարդար տեսնելու նրա «տղամարդկային» արարքը: Սիլվա Համբարձումյանը մի քանի օր առաջ տված ասուլիսում մեղադրել էր Ս. Խաչատրյանին 102 մլն դրամի արժեքով սարքավորումներ իր հանքավայրից գողանալու մեջ: Առավոտ.am-ը նկարագրում է տեղի ունեցածը. Ս. Խաչատրյանը «Մարիոթում» տեսնելով գործարարուհուն՝ նախ հարվածել է ոտքով, ապա հարվածների տարափ տեղացել ձեռքով: Տեղի ունեցածն արձանագրել են «Մարիոթի» տեսախցիկները: «Պանորամա» կայքին Ս. Համբարձումյանն ասել է, որ Ս. Խաչատրյանը նախ փորձել է ոտքով հարվածել, սակայն չի հաջողվել, ապա ձեռքով խփել է գլխին, որից հետո ներկա տղամարդիկ միջամտել են, հետ քաշել Խաչատրյանին: Զարմանալիորեն հյուրանոցի աշխատակիցները տեղեկատվություն չունեին միջադեպի մասին:

Սիլվա Համբարձումյանն իր փաստաբան Կարեն Թունյանի միջոցով հաղորդում է տվել ոստիկանություն:

Ս. Խ.

# Եղանակը առաջիկա օրերին

**Ինչպես տեղեկացանք ԱԻՆ «Հայպետհիդրոմետ» ծառայության օպերատիվ հիդրոօդերեւութաբանության կենտրոնի պետ Զարուհի Պետրոսյանից, առաջիկա երկու օրերին հանրապետության առանձին շրջաններում սպասվում են տեղումներ: Գիշերը օդի ջերմաստիճանը կբարձրանա եւս 3-5 աստիճանով: Հովտային շրջաններում նոյեմբերի 15-ին եւ 16-ին գիշերը սպասվում է 0-1 աստիճան, իսկ ցերեկը՝ 7-8 աստիճան տաքություն: Լեռնային շրջաններում գիշերը՝ 3-8 աստիճան ցուրտ, ցերեկը՝ -3+1: Նախալեռնային եւ լեռնային շրջաններում տեղումները կլինեն ձյան տեսքով: Արարատյան դաշտում եւ հովտային շրջաններում սպասվում է թույլ անձրեւ: Նոյեմբերի 17-ին և՛ Երեւանում, և՛ Արարատյան դաշտավայրում կդիտվի թույլ անձրեւ: Ջերմաստիճանը գիշերը կլինի մինչեւ 7 աստիճան տաքություն: Մինչեւ շաբաթվա վերջ ամպամած եղանակը կպահպանվի: Ժամանակ առ ժամանակ կդիտվի թույլ անձրեւ հովտային եւ նախալեռնային շրջաններում:**

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# Ներդրվեց գնումների էլեկտրոնային համակարգը

*Վաչե Գաբրիելյանը բյուջեի կատարումն իրատեսական է համարում*



Գնումների էլեկտրոնային համակարգի ներդրմանն էր վերաբերում ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանի** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսը: Նա մասնավորապես տեղեկացրեց, որ արդեն տեղադրվել են համակարգը եւ մի շարք գնորդների գնումների մասին հայտարարություններն այդ համակարգում: Դրանք են կառավարությունը, առողջապահության նախարարությունը, Լոռու մարզպետարանը եւ գնումների աջակցման կենտրոնը: Ըստ ֆինանսների նախարարի, համակարգը հնարավորություն է տալիս խուսափել միջամտությունից, երբ այլեւս հնարավոր չի լինի փոխել փաստաթղթերը, շուտ կամ ուշ բացել ծրարները եւ այլն: Վաչե Գաբրիելյանը նշեց նաեւ, որ նոր համակարգը եվրոպական համակարգ է մեր առանձնահատկություններով: Նրա շնորհիվ նվազագույնի կհասցվեն շփումները տնտեսվարողների եւ պետական մարմինների ու գնումների գործակալության միջեւ, կխնայվի ժամանակը:

Վաչե Գաբրիելյանը տեղեկացրեց, որ 2012-ից բոլոր գնումների մրցույթները կլինեն էլեկտրոնային: Առաջինը դրան կանցնեն պետական կառավարման շուրջ 60 կառույցներ: Կեղծ հայտերից խուսափելու համար յուրաքանչյուր կազմակերպություն նախ կգրանցվի գնումների կենտրոնում: Սակայն եթե 3 տարվա ընթացքում որեւէ կազմակերպություն բարեխիղճ գործունեություն է իրականացնում, ապա դրանից հետո փաստաթղթերի մի ամբողջ շարք այլեւս ներկայացնելու կարիք չի ունենա: Նախարարը տեղեկացրեց, որ գնումների ընդհանուր ծավալը 2010-ին կազմել է 450 մլրդ դրամ:

Հարկային փոփոխությունների փաթեթի վերաբերյալ տրված հարցերին պատասխանելով՝ ֆինանսների նախարարը հայտնեց, որ փաթեթի քննարկումները շարունակվում են: Ինչ վերաբերում է պետեկամուտների կոմիտեի նախագահի մատնանշած ռիսկերին, ապա դրանք ընդամենը մակրոտնտեսական առումով մտահոգություններ են: Նախարարի հավաստմամբ՝ եթե չլինեն արտակարգ իրադարձություններ, բյուջեի մուտքերն ապահովելն իրատեսական է:

Վաչե Գաբրիելյանը հայտնեց նաեւ, որ հանքարդյունաբերության ոլորտում տարեկան լրացուցիչ 2,5 մլրդ դրամ է ակնկալվում վերոնշյալ հարկային փոփոխություններից հետո: «Այսպես կոչված շքեղության հարկը 90 հազար դոլարից ավելի մեքենաների վրա կիրառելիս ինչո՞ւ են ընտրվել այդ արժեքի մեքենաները» հարցին էլ նախարարը պատասխանեց, որ իրենք հարցրել են փորձագետներին եւ եկել այդ եզրակացության:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԶԳ **Ընթացիկ**

# Բրիտանիան ունի առեւտրային շահեր, հետեւաբար ուզում է խաղաղություն տարածաշրջանում

Միացյալ Թագավորության համար տարածաշրջանում թիվ 1 առաջնահերթությունը հակամարտությունների կանխումն է, խաղաղ կարգավորումը, թեեւ բրիտանական կողմը ուղղակի ներգրավված չէ մասնավորապես ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, բայց մարդկային ու քաղաքացիական հասարակության շփումները ողջունում է՝ պաշտոնական շփումների սակավության ֆոնին:



Իսկ թե ինչպես է Միացյալ Թագավորությունը համադրում տարածաշրջանում ունեցած ու ցցուն դրսեւորվող իր նավթային շահերը հակամարտությունների կանխման հետ, «Ազգի» հարցին երեկ ՄԱԱ-ում հյուրընկալված Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Չարլզ Լոնսդեյլը արձագանքեց, որ կապն ակնհայտ է: «Մենք ունենք առեւտրային շահեր եւ քանի որ ունենք առեւտրային շահեր, ուզում ենք տեսնել կայուն, անվտանգ ու բարգավաճող տարածաշրջան»:

Արդեն հունվարին իր դիվանագիտական չորսամյա առաքելությունն ավարտող դեսպանը շեշտեց, որ Մեծ Բրիտանիան աջակցել ու աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, միեւնույն ժամանակ ընդգծելով, որ հարցի լուծումը կախված է հենց կողմերի քաղաքական կամք դրսեւորելու պատրաստակամությունից:

Խոսելով Մեծ Բրիտանիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի մասին՝ դեսպան Լոնսդեյլը հիշեցրեց, որ Միացյալ Թագավորության դիրքորոշումն այս հարցում չի փոխվի Հայաստանում դեսպանների փոփոխության հետ, այն ձեւակերպմամբ, որ օգտակար չի լինի հնչեցնել Մեծ Բրիտանիայի տեսակետը, այլ Հայաստանն ու Թուրքիան պետք է վերադառնան ու վերանայեն այդ իրադարձությունները:

Դեսպանի վկայությամբ՝ մոտ ժամանակներս Մեծ Բրիտանիան չի ծրագրում նաեւ վերանայել Հայաստանի հետ վիզային ռեժիմին առնչվող որեւէ փոփոխություն:

Այդուհանդերձ, բրիտանական դեսպանական զույգի նշանակումը Հայաստանում կարեւորելով որպես բրիտանական արտգործնախարարության քայլ չառանձնացնելու զույգին ու միեւնույն ժամանակ երկու բանիմաց ներկայացուցիչ ունենալու Հայաստանում՝ դեսպան Լոնսդեյլը Հայաստանից հեռանում է որպես ոչ պաշտոնական զբոսաշրջային դեսպան-գովազդող՝ ամենուր ներկայացնելով Հայաստանի հարուստ ժառանգությունը:

**Ա. Հ.**

ԳԼԵՆԴԵՅԼ

# Բանավեճ արդարացի փոխհատուցման թեմայով

**Ըստ Կալիֆոռնիայից ստացված հաղորդագրությունների՝ Ամերիկայի արեւմտյան շրջանի Հայ ազգային կոմիտեի (Հայ դատի) կազմակերպությամբ «Շերատոն Յունիվերսըլ» հյուրանոցի դահլիճում նոյեմբերի 25-27-ին տեղի է ունենալու բանավեճ «Ժամանակակից մոտեցումներ անդրազգային արդարության» թեմայով, որը քննարկելու է Հայոց ցեղասպանության ճանաչման եւ արդարացի փոխհատուցման ուղիները:**

**Բանավեճին մասնակցելու են Մայքլ Բազիլերը, դեսպան Արա Պապյանը, պրոֆ. Ջերմեն Մկքալփինը եւ Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:**

**Մայքլ Բազիլերը իրավագիտության դասախոս է Օրենջի (Կալիֆոռնիա) Չեպմեն համալսարանում, եւ գիտաշխատող Լոնդոնի Հոլոքոսթի դաստիարակման տրաստում: Հեղինակն է «Հոլոքոսթյան արդարություն: Փոխհատուցման պայքարը ամերիկյան դատարաններում» վերլուծական հատորի, ինչպես նաեւ «Ռաֆայել Լեմկինի դոսիեն Հայկական ցեղասպանության մասին» գրքի առաջաբանի: Ներկայումս որպես խորհրդական մասնակցում է Թուրքիայի Հանրապետության թուրքական երկու բանկերի դեմ հարուցված փոխհատուցման դատական գործերին:**

**Երեքօրյա միջոցառմանը «Լույսեր եւ կինոպերատորական աշխատանք» թեմայով դասախոսություն է կարդալու, դարձյալ ըստ հաղորդագրությունների, ֆիլմարտադրիչ եւ սցենարիստ Էրիկ Նազարյանը, որի «Պոլիս» կարճամետրաժ (15 րոպե) ֆիլմը վերջերս առաջին մրցանակը շահեց «Արփա» միջազգային կինոփառատոնում: Ֆիլմը ամբողջությամբ նկարահանված է Թուրքիայում եւ պատմում է հայազգի ուդ նվագող Արմենակի մասին, որն առաջին անգամ Թուրքիա է ժամանում նախապաշարումներով լի, փորձում գտնել իր մեծ հոր երաժշտական գործիքների խանութը եւ պատասխաններ մի շարք իրեն հետաքրքրող հարցերի:**

**«Լույսեր եւ կինոպերատորական աշխատանք» թեմայով խոսելու է նաեւ «Սիստեմ ըվ է Դաուն» խմբի հայտնի մենակատար Սերժ Թանգյանը, որն անդրադառնալու է արվեստի միջոցով ցեղասպանության թեման ակտիվ պահելու իր փորձառությանը:**

**Եռօրյա միջոցառումը խոստանում է լինել խիստ հագեցած, բովանդակալից եւ հետաքրքրական:**

**Հ. Ծ.**

# Բռնություններ իրական եւ հեռուստատեսային

**Հայաստանի հեռուստատեսությունը գժվել է: Մի առանձին մազոխիստական հետեւողականությամբ են տեսարձակվում այն արտառոց քրեական դեպքերը, երբ որդին սպանում է հորը, հայրը՝ որդուն, մայրը՝ երեխային, ամուսինն ու կինը՝ միմյանց, հետն էլ՝ երեխաներին, իսկ ահեղ ջահելներն էլ բռնաբարում են զառամյալ տատիկներին եւ այլն: Խոսքը չի վերաբերում, ինչպես ասում են, մախաթը պարկում թաքցնելուն: Ոչ իհարկե, խոսքը վերաբերում է այդ դաժան իրադարձությունների, առանց չափազանցության, գովազդին: Օրվա մեջ մի քանի անգամ, բոլոր հեռուստաալիքներով ամենայն մանրամասնությամբ պատմվում է այդ արտառոց անմարդկային, տգեղ ու այլանդակ իրողությունների մասին: Բանը հասնում է նրան, որ եղեռնագործությունների «խանդավառ» տարփողումներից հետո ողբերգականը հաճախ դառնում է նույնիսկ... զավեշտական: Մարդիկ սկսում են ցինիկորեն սրամտել՝ ինչո՞ւ է, օրինակ, ջահել տղան բռնաբարում տատիկին, չփորձելով նրա խաթրն առնել «ջանով-ղուրբանով»: Խեղճ զառամյալ կանանց մենախոսություններից հետո էլ գլխի չես ընկնում՝ նրանք դժգո՞հ են տեղի ունեցածից, թե՞ ...**

**Հայաստանում բարոյականության անկումը, ավանդական ընտանիքի աղճատումը եւ նմանատիպ այլ երեւույթներ բացատրում են մեղկ Եվրոպայի ազդեցությամբ: Դրա մեջ մեծ ճշմարտություն կա: Սակայն հազիվ թե Եվրոպան պարտադրի, որ, ասենք, հայրասպանությունը վերածվի յուրօրինակ տեսահոլովակի: Սա, իհարկե, սենսացիա փնտրող (կարեւոր չէ՝ ինչպիսի) հայոց հեռուստատեսության նախաձեռնությունն է:**

**Ռուսաստանում նման դեպքերը եզակի չեն, եւ այդ երկրում ապրող հայերը հպարտանում էին, որ իրենց նախնյաց երկրում նման երեւույթներ տեղի չեն ունենում: Եվ քանի որ այստեղ շատերն են դիտում Հայաստանի հեռուստաալիքները, ապա նրանք սկսել են: Հատկապես տատիկների՝ այժմ արդեն «հեռուստատեսային» անարգումներից հետո:**

**Սակայն այս ամենը, թերեւս, հակահայկական քարոզչական լայն թեմաներ է տալիս հարեւան ազերիներին: Բացեք նրանց կայքերը եւ կհանդիպեք համապատասխան «պարզաբանումների»՝ խնդրեմ, սա է ձեր բարոյական դեմքն ու էությունը: Եթե դուք ինքներդ այդքան պիղծ եք մերձավորների նկատմամբ, ապա ինչ կարող եք պահանջել ուրիշներից: Եվ այլն:**

**Չափի զգացում պետք է դրսեւորել: Չի կարելի գժվել այն աստիճան, որ աղետը վերածվի գովազդի առարկայի: Նման տխրահռչակ «սենսացիաները» ոչ այնքան անակնկալի են բերում հեռուստադիտողներին, որքան վշտացնում ու դառնացնում են նրանց՝ էլ ի՞նչ նոր երեւույթներ է մեզ հրամցնելու անկախ ու ազատ Հայաստան երկիրը:**

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Ի վերջո ո՞վ է լինելու ԱԺ նոր նախագահը

*1-ին էջից*

Երեկ արդեն հայտնի էր Հովիկ Աբրահամյանի պատգամավորական սենյակի տեղը, դա ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանի սենյակի դիմաց է, ԱԺ երկրորդ հարկում, որն արդեն երեկ վերակահավորվում էր: Հ. Աբրահամյանի հետ հեռանալու դիմում են գրել միայն նրա գալուց հետո ԱԺ-ում հաստատված մի շարք աշխատակիցներ (Արմինե Անտիկյան, Վիկտոր Մնացականյան, Սերգեյ Լոքյան): ԱԺ նախագահին իր խոստացած մեկնաբանություններն այդպես էլ չտվեց լրագրողներին, անգամ նա իր ելույթից հետո խորհրդարանի շենքում չէր: ԱԺ կանոնակարգով՝ հնգօրյա ժամկետից հետո ԱԺ նախագահը պետք է կրկնի իր հրաժարականը, որն այդ դեպքում միայն ընդունված կլինի: ԱԺ նախագահի լիազորությունների վաղաժամ դադարեցման որոշումն ամեն դեպքում ԱԺ-ն պետք է ընդունի գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Նույն կերպ պետք է նոր թեկնածությունը քննարկվի եւ գաղտնի քվեարկությամբ ընդունվի: Պարզ է, որ դրա համար հազիվ թե արտահերթ նիստ հրավիրվի, այդ պատճառով է գուցե հասկանալի ՀՀԿ-ի չշտապելը՝ ԱԺ նախագահի, եւ հնարավոր է՝ ԱԺ փոխնախագահի թեկնածուներ առաջադրելու հարցում:

Մինչ այս ե՛ւ մամուլը, ե՛ւ քաղաքական շրջանակները ԱԺ նախագահի ամենահավանական թեկնածու համարում են ԱԺ փոխխոսնակ Սամվել Նիկոյանին, չնայած, նկատենք, ՀՀԿ փոխնախագահ, ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն էլ այդպիսի հնարավորություն (ինչու չէ՝ նաեւ ցանկություն) ունի, մանավանդ հնարավոր է, որ նա որպես ԱԺ պատգամավոր այլեւս չվերադառնա նոր խորհրդարան: Այնպես որ թեկուզ 5 ամսով ԱԺ նախագահ լինելով իր պատգամավորական գործունեության եզրափակումը Գալուստ Սահակյանի համար եւս պետք է, որ ցանկալի լիներ (որպես ՀՀԿ ղեկավարներից մեկը՝ նա, անշուշտ, կշարունակի ձիու վրա մնալ): Եթե ԱԺ նախագահ դառնա Սամվել Նիկոյանը, ԱԺ փոխնախագահ, ըստ որոշ կանխատեսումների, պետք է դառնա Հերմինե Նաղդալյանը՝ գենդերային նկատառումներից ելնելով: Սակայն ընդհանուր առմամբ ավելի ոչ ամբիցիոզ տարբերակ կլիներ այն, որ դեռեւս ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն իր լիազորությունները այս 5 օրում դներ ԱԺ փոխխոսնակի վրա, այս դեպքում ո՛չ հնգամսյա նոր պաշտոնյաների խնդիր կծագեր, ո՛չ էլ այդ նոր պաշտոնյաների ամբիցիաներն ապագայում եւս բավարարելու խնդիր:

Համենայն դեպս՝ երեկ ՀՀԿ մամուլի խոսնակ **Էդուարդ Շարմազանովը** վերահաստատեց, թե ՀՀԿ-ն դեռ թեկնածուների հարցը չի քննարկել: Տեսնենք, թե որ տարբերակը կընտրվի: Իսկ **Վիկտոր Դալլաքյանի** միստիկան, թե 1990 թվականից մինչեւ օրս Հայաստանի ԱԺ որեւէ նախագահի լիազորություններն իրենց բնական ավարտին չեն մոտեցել, եւ նախկինում Կոզեռնի գերեզմանոց եղած ԱԺ տարածքում բարու եւ չարի պայքարը չի հանգուցալուծվել, դեռեւս որեւէ փաստով չի հերքվել:

Երեկ խորհրդարանի միջանցքներին թիվ երկու թոփ-թեման Իջեւանում կիրակի օրը տեղի ունեցած ընտրություններն էին, որտեղ հաղթել էր ԲՀԿ-ական Վարդան Ղալումյանը, ընդ որում՝ ավագանու անդամը փաստորեն հաղթել էր տասնամյակից ավելի քաղաքապետ եղած ՀՀԿ-ական Վարուժան Ներսիսյանին (5044 ձայն ընդդեմ 3386-ի): Ընդ որում Ղալումյանին, ըստ որոշ լուրերի, աջակցել էին ե՛ւ ՀՅԴ, ե՛ւ ՀԱԿ շրջանակները նույնպես, ինչը վերլուծաբաններից շատերը նախակարապետ էին համարում խորհրդարանական ընտրություններում նման պատկերների կրկնության, երբ բոլորն ընդդեմ ՀՀԿ-ի նախընտրական կոնֆիգուրացիա կարող է ստեղծվել (նկատի ունեցեք՝ չենք ասում համագործակցություն, այլ՝ ընդդեմ գործակցություն): Այս մոտեցումները, սակայն, տարբեր գնահատականների արժանացան ՀՀԿ խմբակցության ղեկավարի եւ ԲՀԿ խմբակցության պատգամավորի կողմից:

ԲՀԿ-ական **Նաիրա Զոհրաբյանը** այս առումով լրագրողների աժիոտաժին արձագանքելով՝ Իջեւանի ընտրություններն իջեւանցու ձայնը տեղ հասցնելու պարագայով կարեւորեց: Իսկ ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանն, օրինակ, հակված չէր այդ մի ընտրությունից գլոբալ գնահատականներ հանգելու, քանի որ, ըստ նրա, հո երկիրը միակուսակցական չէ՞, մանավանդ՝ ՏԻՄ ղեկավարների 70 տոկոսը հանրապետական է, հանգստացրեց նա լրագրողներին:

***Հ.Գ.-*** *Երեկ իր մահկանացուն կնքեց ԱԺ փոխխոսնակ Սամվել Նիկոյանի հայրը՝* ***Պարգեւ Նիկոյանը****: Ցավակցում ենք:*

# Կալանավորվել է երկու տարի հետախուզման մեջ գտնվողին թաքցնելու համար

Ինչպես տեղեկացանք ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, նոյեմբերի 14-ին կալանավորվել է ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի գլխ. վարչության ավագ օպերլիազոր Մ. Բաղդասարյանը: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնական լիազորությունների չարաշահում): Նախաքննությամբ պարզվել է, որ Բաղդասարյանը շուրջ երկու տարի իմանալով հետախուզվող Տ. Հ.-ի վայրը՝ միջոցներ չի ձեռնարկել նրան կալանավորելու համար: Բացի դրանից՝ օպերլիազորը խորհուրդներ է տվել հետախուզվողին, թե ինչպես թաքնվի իրավապահներից: Վերջինս ազատության մեջ մնալով՝ կատարել է նոր հանցագործություն:

**Ս. Ս.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

# ՓՄՁ, ծագման երկրների սերտիֆիկատներ, ցուցահանդեսներ

*ԱՊՀ առեւտրաարդյունաբերական պալատները պատրաստվում են Եվրասիական ազատ տնտեսական գոտու ստեղծմանը*

Նոյեմբերի 10-ին Մոսկվայում տեղի է ունեցել ԱՊՀ երկրների առեւտրաարդյունաբերական պալատների (ԱԱՊ) խորհրդի նիստը, որին մասնակցում էին Ռուսաստանի եւ նրա առանձին սուբյեկտների, ինչպես նաեւ Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ուկրաինայի պալատների ներկայացուցիչները: Ինչպես մեզ հետ զրույցի ժամանակ հայտնեց Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն **Արա Վարդանյանը**, խորհրդի նիստը հատկանշանական էր նրանով, որ այս տարի նշվում է ԱՊՀ ստեղծման 20-ամյակը, իսկ հաջորդ տարի կնշվի ԱՊՀ առեւտրաարդյունաբերական պալատների խորհրդի ստեղծման 10-ամյակը:



Ըստ Արա Վարդանյանի՝ խորհրդի նիստում քննարկվել են Եվրասիական ազատ տնտեսական գոտու ստեղծման հարցն ու ԱԱՊ-ների համագործակցությունն այդ համատեքստում: Հայկական կողմն առաջարկել է սերտացնել համագործակցությունը փոքր եւ միջին ձեռնարկատերերի մասով: Այսինքն, որպեսզի ԱՊՀ երկրների առեւտրաարդյունաբերական պալատների օգնությամբ, այդ երկրների փոքր եւ միջին ընկերությունների համար հնարավորություններ ստեղծվեն միմյանց հետ կապեր հաստատելու, զարգացնելու եւ համատեղ ձեռնարկություններ ստեղծելու: Հայաստանի ԱԱՊ գործադիր տնօրենը որպես փոքր եւ միջին բիզնեսին ցույց տրվող աջակցության լավ օրինակ ներկայացրեց ԱԱՊ ղեկավարների այցելած «Ստրոգինո» տեխնոպարկը: Այստեղ փոքր ձեռնարկություններին տրվում են տարածք, կապի միջոցներ, տարբեր երկրների հետ համագործակցության հնարավորություններ: Արա Վարդանյանը նշեց, որ այդպիսին պետք է լինի Գյումրիի տեխնոպարկը, որը, սակայն, մինչ այժմ չի իրագործվում:

ԱՊՀ պալատների ղեկավարների խորհրդի նիստում առաջարկ եղավ, որ ապրանքների ծագման սերտիֆիկատները տրվեն էլեկտրոնային եղանակով: Հայաստանում արդեն այդ աշխատանքները տարվում են, որպեսզի հետագայում բոլոր պալատները իրար հետ շաղկապված լինեն էլեկտրոնային համակարգում: Հայաստանի ԱԱՊ գործադիր տնօրենի համոզմամբ, Եվրասիական ազատ տնտեսական գոտու ստեղծման պարագայում, էլեկտրոնային համակարգով սերտիֆիկատների տրամադրման նկատմամբ պահանջը կմեծանա:

ԱՊՀ ստեղծման 20 ամյակի կապակցությամբ տեղի ունեցած ցուցահանդեսին ԱԱՊ-ները ներկայացրել են իրենց հնարավորությունները եւ ծառայությունները: Որոշվել է, որ ԱՊՀ երկրների պալատները պետք է հովանավորեն առեւտրաարդյունաբերական ցուցահանդեսները:

Վերջում Արա Վարդանյանն ավելացրեց, որ ԱՊՀ կազմավորման 20-ամյակի եւ ԱՊՀ անդամ երկրների միջեւ գործարար համագործակցության զարգացման, միջռեգիոնալ առեւտրատնտեսական համագործակցության զարգացման եւ ամրապնդման գործում ակտիվ գործունեության համար 3 երկրների ԱԱՊ ղեկավարներ արժանացել են ԱՊՀ գործադիր կոմիտեի հատուկ պատվոգրին: Նրանց թվում է նաեւ Հայաստանի ԱԱՊ նախագահ Մարտին Սարգսյանը:

Ա. Ս.

ԻՐԱՎԻՃԱԿ

# Գործազրկության մակարդակը 0,6%-ով նվազել է. աշխատանք է փնտրում 83.900 մարդ

**Զբաղվածության պետական ծառայության գործակալության պետի տեղակալ Արտակ Սիմոնյանի գնահատմամբ՝ զբաղվածության շուկայում վերջին տարում փոփոխություն է գրանցվել: Այս տարվա հոկտեմբերին տարեսկզբի համեմատ գործազրկության մակարդակը նվազել է 0.6 տոկոսով եւ կազմում է 6.4 տոկոս: Գործազրկության հատկապես բարձր մակարդակ է նկատվում Լոռիում, Սյունիքում, Շիրակում, Կոտայքում, Տավուշում եւ մայրաքաղաքում:**

**«Ընտրված հատուկ մեթոդաբանությամբ գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմում է 19 տոկոս», «Պոստ սկրիպտում» ակումբում ասաց Սիմոնյանը: Նոյեմբերի 1-ի դրությամբ, աշխատանք փնտրողների թիվը կազմում է 83.900 մարդ: Թիվը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 13.1 տոկոսով, իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 10 տոկոսով:**

**«Գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 84 տոկոսը կամ 70.5 հազար»: Չի նվազում գործազուրկ կանանց տոկոսը: Աշխատանք է փնտրում 49.900 կին: Նոյեմբերի 1-ի դրությամբ գործազրկության նպաստի ստացման իրավունք ունի 15.932 գործազուրկ: Այն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 24.6 տոկոսով: Գործազրկության մակարդակը փաստում է երկրի տնտեսական վիճակն ու հասարակության կենսամակարդակը: Սակայն գործազրկությունը նաեւ երիտասարդների՝ մասնագիտության հարցում սխալ ընտրություն կատարելու պատկերն է արտացոլում:**

**ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնի տնօրեն Հայկուհի Գեւորգյանի ներկայացմամբ՝ գործազրկությունը երիտասարդների շրջանում շատ բարձր մակարդակ ունի: Դա «մոդայիկ մասնագիտություն» ընտրելու հանգամանքով է պայմանավորված: Բուհի դիմորդները հաշվի չեն առնում ոչ միայն սեփական կարողությունները, այլեւ տվյալ մասնագիտության պահանջարկը:**

**Ծրագրավորող, մենեջեր, հաշվապահ, եռակցող, շուկայագետ, վարսահարդար, մատնահարդար, դիմահարդար, հրուշակագործ: Սրանք այն 10 մասնագիտություններն են, որոնք ամենապահանջվածն են հանրապետությունում:**

**Մասնագետի հավաստիացմամբ՝ սխալ ընտրության պատճառով է, որ երիտասարդության գործազրկության մակարդակի ցուցանիշն ավելի բարձր է, քան հանրապետության տարածքում ընդհանուր գործազրկության մակարդակը:**

**«Ես ցանկանում եմ դառնալ նախարար»: Հայկուհի Գեւորգյանի «Ի՞նչ ես ուզում դառնալ» հարցին դպրոցներում եւ մանկապարտեզներում ամենից շատ հենց այս արտահայտությունն է լսել: «Կարծ չունի, թե ինչ մասնագիտություն կամ որ բնագավառում, գլխավորը նախարարի պաշտոնն է»:**

**Կենտրոնն աշակերտների շրջանում կատարել է հետազոտություն եւ պարզել՝ մեծամասնությունը մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշված չէ: Բժշկություն, ծրագրավորում, տնտեսագիտություն, իրավաբանություն եւ դիզայներական գործ: Սրանք մասնագիտությունների թոփ հնգյակն են, որոնք նախընտրում են դպրոցականները: Նրանց միայն 34.1 տոկոսը տեղեկատվություն ունի բուհերի, մասնագիտությունների, աշխատանքի շուկայի առաջարկի եւ պահանջարկի մասին: 58.7 տոկոսի մեջ այդ տեղեկատվությունը թերի է, 2.1 տոկոսը ընդհանրապես պատկերացում չունի:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Տուբերկուլոզը բուժվում է, եթե վաղ դիմեն բժշկի

Գարնանն ու աշնանը հատկապես գլուխ է բարձրացնում մեր օրգանիզմում եղած միկրոբակտերիան, քայքայում է իմունային համակարգը հատկապես այն նպաստող պարագաներում, որոնք են վատ սնունդը, ՄԻԱՎ-ը, ծխախոտը, ալկոհոլը, թմրանյութերը եւ իհարկե սթրեսները: Եթե մարդը վարակված չէ տուբերկուլոզով, ուրեմն չի հիվանդանա եւ կարող է լինել միկրոբակտերիայի կրողը ամբողջ կյանքում: Տուբերկուլոզին (ՏԲ) «**Ազգը**» մի քանի անգամ անդրադարձել է ու ազգաբնակչությանը տեղեկացրել, թե ուր դիմել եւ ինչպես վարվել, եթե հայտնաբերվում է առաջնային ՏԲ-ն:

«**Ազգը**» զրուցեց տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի վիճակագիր **Նարինե Մեջլումյանի** հետ եւ տեղեկացավ մեր հանրապետությունում ՏԲ-ի վերջին տվյալներին ու տարվող աշխատանքներին: Երկու օրվա ուսուցողական սեմինարները, որոնք անցկացվում են բուժաշխատողների ու լրագրողների հետ, նպատակ ունեն իրազեկելու, որ տուբերկուլոզ հիվանդությունը հայտնաբերելու, բուժելու եւ կանխելու համար 2004-ից մշակվել եւ ներդրվել է ազգային ծրագիր, եւ ողջ ընթացքը կատարվում է պետպատվերի շրջանակներում անվճար՝ սկսած անալիզներից, մինչեւ ամենավերջին ներմուծված դեղերը:

Եթե 2005-ին մեր երկրում գրանցվել է ՏԲ-ի ամենաբարձր ցուցանիշը՝ 62,4 (100.000 բնակչի թվով), ապա վերջին տարիներին նկատվել է այդ ցուցանիշի նվազում: 2010-ին հիվանդացության ցուցանիշը 41,3 է եղել: Իսկ թե ինչո՞վ է բացատրվում ցուցանիշի նվազումը, տկն Մեջլումյանը ասաց. «ՏԲ-ի հայտնաբերումն է ավելի լավացել, եւ առաջնային բուժօղակը դասընթացներից հետո ճշգրիտ կարողացել է հետազոտել դիմողներին եւ ախտորոշել: Բացի դրանից՝ ծառայությունը մոտեցվել է ազգաբնակչությանը, բացվել են 70 հատուկ գործող տարածքային պոլիկլինիկաներ ու լաբորատորիաներ»:

Անցած մեկ տարվա կտրվածքով նվազել է նաեւ ՏԲ-ից մահացության ցուցանիշը: Եթե 2007-ին գրանցվել էր ամենաբարձր 5,7, 2009-ին՝ 3,9, իսկ 2010-ին կազմել է 2,9 (100.000 բնակչի հաշվարկով): Մասնագետը այդ նվազումը բացատրեց. «Մեր երկրում սկսվեց դեղորայքակայուն ՏԲ-ի բուժումը 2010-ի սկզբին (ազգային ծրագրի շրջանակներում - Մ. Մ.), եւ այն հիվանդները, որոնք շրջում էին մարդկանց մեջ, մահանում, այժմ նրանց հիմնական մասը ողջ հանրապետությունից, ընդգրկվում է ծրագրում եւ բուժվում՝ նպաստելով մահացության ցուցանիշի նվազմանը»:

ՏԲ-ն բուժվող հիվանդություն է, եթե վաղ է հայտնաբերվում կամ էլ բուժումը չի ընդհատվում: Հաճախ հիվանդները դիմում են ծանոթ բժշկի, նրանից ստանում խորհուրդներ ու ազատ կարողանում են դեղատներից գնել դեղորայքը եւ օգտագործել: Սակայն նման ինքնաբուժությունը ավելի է տրում այլ հիվանդությունների առաջ գալը, իսկ ՏԲ-ն դառնում է ոչ թե առաջնային, այլ դեղորայքից կախվածություն, որը 2-5 տարի կարող է ընթանալ ու նաեւ մահվան պատճառ դառնալ:

Մասնագետը տեղեկացրեց, որ ԱՆ-ն ու ծրագրի ղեկավարները քայլեր են ձեռնարկում կանխելու նման կերպ ինքնաբուժվելը, որպեսզի դեղորայքակայունությանը չնպաստեն ու չտարածեն ՏԲ-ն: Տիկին Մեջլումյանը հորդորեց. «ՏԲ-ի խմբի դեղամիջոցները չնշանակել այլ բորբոքային հիվանդությունները բուժելու համար: Իսկ ՏԲ-ի կասկածի դեպքում անգամ չնշանակել այդ խմբի 5 դեղորայքը՝ քանի դեռ վերջնական չի հաստատվել հիվանդությունը»:

Կյանքում առաջին անգամ ՏԲ-ով վարակվածների բուժումը տեւում է 6 ամիս, իսկ կրկնակիի՝ դեղորայքակայունի դեպքում՝ 2 տարի, երբեմն 3 տարի: Ընդհատումներով բուժումը բերում է դեղորայքակայունության առաջացման, դժվար բուժվող, երբեմն չբուժվող՝ առաջ է բերում հաշմանդամություն եւ մահ: Մեկ տարվա ընթացքում վարակիչ հիվանդը չբուժվելով, կարող է վարակել մինչեւ 15 մարդու, որոնց 10 տոկոսը առաջին 2 տարվա ընթացքում հիվանդանում են տուբերկուլոզով:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Քաղաքապետի ընտրությունն՝ այսօր

Այսօր՝ առավոտյան ժամը 11-ին Երեւանի քաղաքապետարանում ավագանին «կընտրի» մայրաքաղաքի 54-րդ քաղաքապետին: Քաղաքապետի միակ թեկնածուն փոխքաղաքապետ, քաղաքապետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանն է՝ ՀՀԿ կուսակցությունից: Ավագանիում երկրորդը համարվող «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն, ինչպես անցյալ տարի, այս անգամ էլ թեկնածու չի առաջադրել: Ինչպես օրեր առաջ նշել էինք, այսօր կայանալիք ընտրությունն ընդամենը պաշտոնական, իրավական արարողություն է՝ արձանագրություն: Չի բացառվում, որ կրկնվի նույն սցենարը, ինչ 2010-ին, երբ Գագիկ Բեգլարյանի հրաժարականից հետո Կարեն Կարապետյանը 50 կողմ, 1 դեմ ձայների հարաբերակցությամբ ընտրվեց քաղաքապետ: Եթե այսօր ԲՀԿ-ն անգամ դեմ քվեարկի, ընտրությունների արդյունքը չի փոխվի: ՀՀԿ-ն մեծամասնություն է նաեւ քաղաքապետարանում: Հետեւաբար այսօրվա ընտրությունը անակնկալներ կամ սուր զգացողություններ չի խոստանում: Սակայն հետաքրքրական կլինի լսել Տարոն Մարգարյանի խոսքը՝ ինչպես է նա պատկերացնում մայրաքաղաքի կառավարումը, ինչ մեխանիզմներով, եւ որոնք են լինելու նրա խաղի կանոնները:

Երեւանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանը հրաժարական էր ներկայացրել հոկտեմբերի 28-ին: Դեռեւս մեկ տարի չպաշտոնավարած քաղաքապետը նշել էր, որ պաշտոնից հեռանում է այլ աշխատանքի տեղավորման եւ անձնական խնդիրների պատճառով: Նա չէր հաստատել կամ հերքել լուրը, որ տեղափոխվում է Մոսկվա: Ռուսական լրատվամիջոցներն էլ գրում էին, որ Կարապետյանը կաշխատի «Գազպրոմ» ընկերությունում եւ կզբաղեցնի Ալեքսեյ Միլլերի տեղակալներից մեկի աթոռը:

Ի դեպ, կրկին ռուսական լրատվամիջոցներով լուրեր էին շրջանառվում, որ Կարապետյանը կստանա 154.000 դոլար աշխատավարձ: Այդքան են ստանում Միլլերի տեղակալները: Հարցազրույցներից մեկի ժամանակ Կարապետյանը առաջարկվող աշխատավարձն անվանել էր «աստղաբաշխական»:

Թեպետ Կարապետյանի հրաժարականից անցել է ավելի քան 2 շաբաթ, սակայն նրա անունն ու լուսանկարը Gazprom.ru կայքի «Ղեկավարություն» բաժնում դեռեւս չկան: Ավելին՝ Կարապետյանի անունը «որոնում» համակարգում կարողացանք գտնել ընդամենը մեկ անգամ. 2009-ին Կարապետյանը որպես «Հայռուսգազարդի» տնօրեն հանդիպել է Միլլերին: Այլ տեղեկություններ «Գազպրոմ»-ի պաշտոնական կայքը Կարապետյանի մասին չի հայտնում:

Հ. Հ.

# Եվրասիական միության «հնարավորություն» կողմը

***«Ազգի»-ի հոկտեմբերի 21-ի համարում ներկայացրել էինք Ռուսաստանի վարչապետ, ըստ ամենայնի՝ հաջորդ նախագահ Վլադիմիր Պուտինի Եվրասիական միություն ստեղծելու նախաձեռնությունը: Այդ հրապարակմամբ փորձել էինք պատասխանել հարցերին, թե ինչո՞ւ է Պուտինը հենց հիմա առաջարկում այս քաղաքականությունը, ի՞նչ նպատակ ունի այս քայլով Մոսկվան, ովքե՞ր են համաձայն միանալ այս միությանը եւ որքանո՞վ է հնարավոր ստեղծել այդ միությունը:***
***Այժմ, առաջնորդվելով սկզբունքով, որ ամեն մարտահրավեր նաեւ հնարավորություն է եւ հակառակը, փորձենք հասկանալ, իսկ ի՞նչ հնարավորություններ կարող է բացել Եվրասիական միությունը նրա պոտենցիալ անդամ Հայաստանի համար ու մեր երկրի առջեւ ծառացած ի՞նչ մարտահրավերների կարող է օգնել դիմակայելու:***

## Կրկին Թուրքիան հզոր է, կրկին Ղարաբաղը վիճելի տարածք է

Նախ՝ ի՞նչ խնդիրների առջեւ էր կանգնած նախասովետական Հայաստանը: Մի կողմից հզոր թուրքական տերությունը, որն անմիջականորեն սպառնում էր Հայաստանի առաջին հանրապետության տարածքային ամբողջականությանն ու նրա առհասարակ գոյությանը, մյուս կողմից՝ կոնկրետ Ղարաբաղի պարագայում անորոշությունը հայերի ու, շեշտենք, թաթարների միջեւ: Թուրքական պետությունը հզորացման յուրաքանչյուր ժամանակահատվածում էականորեն վտանգում է Հայաստանի, հայ ժողովրդի անվտանգությունը: Այն տարիներին որպես «փրկության օղակ» մեկնաբանվեց եւ ոմանց կողմից ընկալվեց Հայաստանի սովետականացումը: Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում առանց դիմադրության տեղի չունեցավ, սակայն բոլշեւիկյան հեղափոխության տարածումը մեր երկրում հնարավորություն տվեց գոնե պահպանելու այն, ինչ կար:

Ղարաբաղի պարագայում սովետական կարգերի հաստատումը բոլորովին այլ նշանակություն ունեցավ. նորահայտ դեմոկրատական կամ մուսավաթական Ադրբեջանը, ցուցաբերելով «քաղաքական մշակույթի բավական օրինակելի փորձ», թերեւս համաձայնեց ընդունել կոմունիզմն ու նրա հերոսներին միայն սեփական ցանկությունների բավարարման պարագայում, դրանցից էր Ղարաբաղի ու Նախիջեւանի ներառումը Սովետական Ադրբեջանի կազմում: Այս փաստը, այսինքն այն, որ Ղարաբաղը երբեք իր կազմում չունեցած ու այսօրվա Ադրբեջանի իրավանախնին՝ մուսավաթական Ադրբեջանը գործարք է գնացել կոմունիստների հետ, բավական հաջողությամբ ապացուցվում է հանգամանքով, որ ի տարբերություն Հայաստանի, որտեղ կոմունիստները դիմադրության արժանացան, Ադրբեջանում որեւէ դիմադրություն չեղավ:

Հետեւաբար եզրակացնելով՝ ընդգծենք, որ սովետական կարգերի հաստատումը Հայաստանի համար արժեւորվեց թուրքական բնաջնջման վտանգի կանխարգելմամբ, սակայն նաեւ բերեց Ղարաբաղի ժամանակավոր կորուստին:

Ի՞նչ իրավիճակ է այսօր տարածաշրջանում: Կրկին հզոր, ավելին՝ նեոօսմանական հովերով տարված Թուրքիա եւ կրկին Ղարաբաղի «վիճելի տարածք»: Այստեղ հարկ է նկատել, որ նեոօսմանական գաղափարները ռեալպոլիտիկ բերած Անկարան խիստ շահեկան է Արեւմուտքի, կոնկրետ՝ ԱՄՆ-ի համար: Տեսեք. նեոօսմանիզմը ձգտում է դիվանագիտական, քաղաքական, տնտեսական ակտիվ գործունեություն ծավալել թիրախային տարածաշրջաններում՝ Մերձավոր Արեւելք, Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկա, Կովկաս:

Բացի սրանից՝ այս քաղաքականությամբ Թուրքիան ձգտում է միջնորդի դեր ստանձնել տարածաշրջանային հակամարտություններում, դառնալ դեպի Մերձավոր Արեւելք ժողովրդավարություն ու արդիականացում «ներմուծող» կամ «տարանցող» երկիր, յուրահատուկ միջնորդ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ ու այս միջոցով բարձրացնել Թուրքիայի հեղինակությունն ու ազդեցությունը թիրախային տարածաշրջաններում: Որպեսզի Անկարան կարողանար այսպիսի բան իրագործել կամ գոնե դրա փորձը կատարեր, անհրաժեշտ էին իսլամական, մասնավորապես արաբական աշխարհում համապատասխան փոփոխություններ: Ինչի՞ ականատեսն ենք այժմ՝ «արաբական գարնան», ի՞նչ է սա նշանակում, արաբական աշխարհում համապատասխան փոփոխություններ, այս համապատկերում ի՞նչ է անում Թուրքիան՝ փորձում է իր գաղափարներն ու գաղափարախոսություններն առաջատար դարձնել թիրախային տարածաշրջաններում: Իսկ ո՞ւմ կարող է ձեռնտու լինել թուրքական գործոնի ազդեցության մեծացումը հիշյալ տարածաշրջաններում, իհարկե ԱՄՆ-ին, քանի որ վերջինս սեփական ձեռամբ այս կարեւորագույն տարածաշրջանն ուզած ուղղությամբ տանելու «տեխնիկական դժվարություններ» զգալով՝ կարող է դա «հանձնարարել կամ առաջարկել» ռազմավարական դաշնակից Թուրքիային: Վերջինս էլ, փոխարենը, կարող է ստանալ նեոօսմանիզմի կենսագործման համար ամերիկյան «կանաչ լույսը»:

Փաստորեն ականատեսն ենք իրավիճակի, որտեղ տարածաշրջանում գործում է ամերիկյան «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագրի իրականացումը, որտեղ հրաշալիորեն կարող է տեղավորվել թուրքական նեոօսմանիզմը:

Այս ամենն, անշուշտ, առաջացնում է առաջին հերթին Մոսկվայի անհանգստությունն ու դրդում նրան համարժեք պատասխան քայլերի. ակնհայտ է դառնում, որ հենց այդպիսի համարժեք պատասխան քայլ է Պուտինի Եվրասիական միությունը:

## Ընդօրինակելով Ադրբեջանին

Եվրասիական տարածաշրջանում գերտերության հայտ ներկայացրած Թուրքիան շարունակում է պահպանել «ձեռնպահ լռություն» Պուտինի առաջարկի առնչությամբ: Սա տրամաբանական ու սպասելի է անշուշտ. Թուրքիան Արեւմուտքի դաշնակիցն է, իսկ արեւմտյան որոշ վերլուծաբաններ, երբ Պուտինը «նոր էր ավարտել» իր հոդվածը, միջազգային մամուլի էջերից անմիջապես շեշտեցին, որ Եվրասիական միությունը «մարտահրավեր է Արեւմուտքին»: ԱՊՀ տիրույթում, երբ երկրների վարչապետներն օրերս Սանկտ Պետերբուրգում ազատ տնտեսական գոտու վերաբերյալ համաձայնագիր էին կնքում, Ուզբեկստանը, Թուրքմենստանը եւ Ադրբեջանը, Պուտինի իսկ խոսքերով, մինչեւ տարեվերջ ժամանակ են խնդրել մտածելու՝ միանա՞լ ազատ տնտեսական գոտուն, թե՞ ոչ: Ճիշտ է, սրանից հետո Ադրբեջանում, իհարկե ոչ պաշտոնապես, բայց որոշ գործիչներ, միլլիմեջլիսականներ՝ իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցությունից, հայտարարեցին, որ Ադրբեջանը չի մտնի մի տեղ, որտեղ Հայաստանն է: Իհարկե, հիշյալ գործիչները չմանրամասնեցին, թե նույն տրամաբանությամբ ինչո՞ւ է Բաքուն ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵԽԽՎ-ի, նույն ԱՊՀ-ի անդամ, բայց դա այլ խոսակցություն է:

Ուրեմն Բաքուն Եվրասիական միության հիմք՝ ԱՊՀ երկրների ազատ տնտեսական գոտու համաձայնագիր չի ստորագրի: Սրա ապացույցը տվեց նաեւ Իլհամ Ալիեւն անձամբ, օրերս Թուրքիայում ստորագրելով երկար սպասված գազային պայմանագիրը: Եվրոպացի որոշ փորձագետներ այս կապակցությամբ «այնքան ուրախացան», որ անմիջապես հայտարարեցին, թե թուրք-ադրբեջանական գազային պայմանագիրը ՆԱԲՈՒԿԿՈ-ի հիմքն է, սրա դիմաց, հետաքրքրական «պատահականությամբ», նախագահ Մեդվեդեւը Գերմանիայում պայմանագիր ստորագրեց ռուսական գազը Եվրոպա տեղափոխելու՝ «Հյուսիսային հոսքի» բացման վերաբերյալ, ինչի «քույր» նախագիծ՝ «Հարավային հոսքը» ՆԱԲՈՒԿԿՈ-ի անմիջական «մրցակիցն է»:

Արդեն խոսել ենք այն մասին, որ Իլհամ Ալիեւի Թուրքիայի հետ ստորագրած հիշյալ պայմանագիրն առավելապես հակառուսական ձեռնարկների շարքից է. սրանով Ադրբեջանի նախագահը, բացի այլ բաներից, նաեւ ընդգծում է՝ Ադրբեջանը Եվրասիական միություն չի մտնի: Իսկ եթե այդ միությունն ի վերջո ստեղծվի եւ ստեղծվելու լուրջ նախադրյալներ ունի, ապա դա կնշանակի, որ կամ ՆԱԲՈՒԿԿՈ-ն չի կառուցվում, քանի որ այս՝ ռուսական գազը Եվրոպա արգելակող նախագիծը հենց անցնելու է «Եվրասիական միության տարածքով», կամ մեկնարկում է նոր, մեղմ ասած, սառը պատերազմ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ: Իհարկե, այս ամենը հնարավոր է, եթե Իլհամ Ալիեւը շարունակի այնպիսի քայլեր կատարել, որոնցով միայն ապացուցում է՝ իր երկիրը Պուտինի նախաձեռնությանը դեմ է:

Այստեղ Հայաստանի համար բացվում է մի նոր հնարավորություն. դիտարկենք, որ միությունը ստեղծվում է, ու այնտեղ չկան ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ Անկարան: Մենք, ինչպես եւ նախասովետական ժամանակաշրջանում, կասեցնում ենք հզորացող Թուրքիայից բխող վտանգը՝ մեր անվտանգությանը, միեւնույն ժամանակ ստանում հնարավորություն վերջնականապես անվիճելի համարելու Ղարաբաղը: Մոսկվայի առջեւ կարելի է եւ պետք է դնել, «չվախենանք» այդ բառից, ուղիղ պահանջ՝ ճանաչել ԼՂՀ անկախությունը, որին միայն այդ կերպ հնարավոր կլինի ներքաշել Եվրասիական միություն ու դրանով իսկ ստանալ նաեւ Հայաստանի համաձայնությունը՝ մտնել նույն միության կազմ: Այս պարագայում Մոսկվան այլեւս չի կարող երկդեմի կամ «հավասարակշիռ» քաղաքականություն վարել, քանի որ, ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանը պատրաստակամություն է հայտնում դառնալու Եվրասիական միության անդամ երկիր: Ինչպես վերը նշեցինք, նման քաղաքականության նախադեպը մեզ ցույց է տվել նույն նախասովետական Ադրբեջանը՝ սովետական կարգերն ընդունելու ժամանակ:

Կկարողանա՞նք վերջապես ստեղծել Մոսկվայի հետ պահանջներով խոսելու նախադեպ, եւ ամենակարեւորը՝ իրականություն կդառնա՞ Եվրասիական միությունը, ու կշարունակի՞ արդյոք Բաքուն իրեն հեռու նետել Մոսկվայից՝ ցույց կտա միայն ժամանակը:

Իսկ առայժմ նշենք միայն՝ Սանկտ Պետերբուրգի, իսկ տվյալ պարագայում թերեւս Լենինգրադի Ֆիննական կայարանի մոտ տեղադրված Լենինի արձանից օրեր առաջ այդ քաղաքում «ժամանակավորապես ապրող» երկու ՀՀ քաղաքացիներ պաստառ էին կախել՝ մակագրությամբ. «Մի տխրեք, վաղը գալիս ենք», սրա կողքին որոշ ժամանակ անց հայտնվել է նաեւ երկրորդ պաստառը. «Վաղն արդեն եկել է...»: Դժվար է ասել՝ ՀՀ քաղաքացիներն ինչի՞ց ելնելով են նման մակագրություններ հեղինակել...

**ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

# Ազիմովի «փոխզիջումը»

**Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը որոշակի պարբերականությամբ ԼՂ հարցում իր երկրի դիրքորոշման շուրջը աղմկոտ «բացահայտումներ է անում»: Ընդսմին, ոչ մի անգամ ներկա չգտնվելով բանակցություններին եւ որեւէ շփում չունենալով հայկական կողմի հետ, նա համարվում է Իլհամ Ալիեւի հատուկ բանագնացը ղարաբաղյան կարգավորման գործընթացում: Երեւի նրա դերակատարությունը սահմանափակվում է հարցազրույցներ տալով եւ «գաղափարներ» հնչեցնելով, որոնք «նորին նախագահական մեծությունը» նպատակահարմար չի տեսնում բարձրաձայնել անձամբ:**

**Ազիմովի վերջին «գյուտն» այն է, որ «փոխզիջումը երկու համայնքների համատեղ գոյակցությունն է»: Կարելի է, իհարկե, դրան վերաբերվել հումորով: Բայց, ըստ երեւույթին, ադրբեջանական կողմի դիրքորոշման մեջ տեղի է ունենում «արժեքների վերագնահատում»: Ավելի ճիշտ կլինի ասել՝ ամեն ինչ վերադառնում է սկզբին. Բայրամ Սաֆարովը ԼՂ հայերին «ցույց է տալիս Հակարո գետի հակառակ կողմը», իսկ Ազիմովն էլ «երկու համայնքների համատեղ գոյակցությունը համարում հնարավոր փոխզիջում»:**

**Եվ կարծես իմաստ չկա Իլհամ Ալիեւի հատուկ ներկայացուցչի խոսքում այլ նրբերանգներ փնտրելու: Ասված է ակնհայտորեն պարզ. «Եթե մենք համաձայն ենք, որ Լեռնային Ղարաբաղում հայեր ապրեն, ապա դա արդեն իսկ փոխզիջում է»: Սա է Ազիմովի միտքը:**

**Խնդիրն այն է, թե ո՞վ է դրա հասցեատերը: Լեռնային Ղարաբա՞ղը: Հայաստա՞նը: Թե՞ միջազգային հանրությունը: Սա շատ կարեւոր է, քանի որ Ազիմովը գիտի, որ ե՛ւ Լեռնային Ղարաբաղում, ե՛ւ Հայաստանում իր երկրի նպատակը վաղուց է հայտնի: Եվ որ անցած բոլոր տարիներին ԼՂ հարցում առաջընթաց չի եղել, քանի որ Ադրբեջանը միշտ աչքի առաջ է ունեցել մի այնպիսի իրավիճակ, որը թույլ կտա «հասնել ընդմիշտ լուծման»: Մի դեպքում դա խորհրդային բռնամեքենայի օգնությամբ ԼՂ հայ մեծամասնության տեղահանման, հայրենազրկման ծրագիրն էր, որ մինչեւ 1991թ. օգոստոսյան խռովության տապալումն իրականացնում էր Մութալիբովը, հետո՝ արդեն անկախություն հռչակած Ադրբեջանի լայնածավալ ռազմական ագրեսիան ԼՂՀ դեմ:**

**Այսօր էլ, ահա, առաջարկվում է «երկու համայնքների գոյակցություն», իսկ եթե ոչ, ապա «Ադրբեջանն իրավասու է իր տարածքային ամբողջականությունը վերականգնել ամեն գնով»: Մաքուդ Իբրահիմբեկովն էլ իշխանություններին հորդորում է կարգավորման հարցում «չշտապել, պայմանագիր չստորագրել, քանի որ այդ դեպքում հայերը կարող են նույնիսկ Բաքու վերադառնալ, ուրիշ բան է, եթե մեր բանակը լուծեր Ղարաբաղի հարցը»:**

**Դա, ինչ խոսք, հեռանկար չէ: Մյուս կողմից էլ, սակայն, չկա չարիք առանց բարիքի. բոլորի համար պարզ պիտի դառնա, թե որն է Ադրբեջանի նպատակադրվածությունը եւ ինչ մակարդակի «գործընկեր» ունի բանակցություններում հայկական կողմը:**

**Այս իմաստով է, որ մենք ընդգծում ենք Ազիմովի «փոխզիջումային գաղափարի» հասցեատիրոջ հանգամանքը: Եթե դա ասվել է ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին, ապա ո՞րն է լինելու վերջիններիս արձագանքը: Ազիմովն, ի վերջո, ինչ-որ «բայրամսաֆարով» կամ «ակիֆնաղի» չէ, այլ՝ բարձրաստիճան դիվանագետ եւ նախագահի հատուկ ներկայացուցիչ: Ըստ էության, նրա խոսքն Իլհամ Ալիեւի տեսակետն է:**

**Ազիմովի «բացահայտումը» որոշակիորեն ամրապնդում է հայկական կողմերի բանակցային դիրքորոշումը՝ որ Լեռնային Ղարաբաղը չի կարող Ադրբեջանի մաս կազմել: Քանի որ մի երկիր, որտեղ ազգությամբ հայերի բնակությունն իսկ դիտվում է «մեծահոգություն» եւ «փոխզիջում», իրավասու չէ հավակնելու պետական կյանքի «եվրոպական մակարդակի» եւ «իր կազմում ազգային փոքրամասնության իրավունքներ երաշխավորելու»:**

**Ինչպես կարելի է ենթադրել, Ադրբեջանի իշխող վերնախավը «հաջողություններից գլխապտույտ» ունի: Հակառակ դեպքում փոխարտգործնախարար Արազ Ազիմովը «չէր իջնի բայրամսաֆարովի մակարդակին»: Չէր բացահայտի իր երկրի բուն էությունը: Դա գուցե արվել է նաեւ հուսահատությունից: Բայց դա էական նշանակություն չունի: Եվ միջազգային հանրությունը, ի դեմս միջնորդ երկրների, պետք է հստակորեն հակադարձի ադրբեջանական կողմի ֆաշիստական հռետորաբանությանը: Հակառակ դեպքում բանակցային գործընթացը կատարելապես արժեզուրկ կդառնա:**

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Ավստրիա. գյուղմթերքների աշնանային զեղչեր

Հայաստանաբնակներս համոզված ենք, որ Եվրոպայի կենտրոնում գտնվող այս երկրի մասին մենք բավարար պատկերացում ունենք: Չգիտեմ՝ ով ինչ է հասկանում բավարար ասելիս, հավելեմ, որ թե՛ հայաստանցիները, թե՛ ավստրիացիները իրենց առօրյա հիմնական պարենային հոգսերը բավարարելու նպատակով 1 բնակչի հաշվով նույնչափ վարելահողային կարողունակություն ունեն՝ 1700-ական քառակուսի մետր: Համաշխարհային վիճակագրությունը հողի այս տեսակը պարտադիր առանձնացնում է, որովհետեւ հատկապես այնտեղ է հնարավոր առավելագույն արդյունավետ գյուղգործունեություն իրականացնել: Այստեղ նկատի ունենանք, որ եթե համեմատաբար հյուսիսային երկրներում, որոնց թվին կարելի է նաեւ Ավստրիան դասել, գյուղատնտեսական շրջանում հազիվ մեկ բերք է հասունանում, ապա 40-րդ հորիզոնականից ցածում գտնվող տարածքներում, որտեղ է նաեւ հայերիս հիմնական շտեմարան Արարատյան դաշտավայրը, գյուղատնտեսական տարվա ընթացքում 2-3 բերք է հասունանում: Ասել է թե հողի մշակի աշխատանքը նույնչափ էլ արդյունավետ է պետք դիտարկել, քանզի բերքի աճեցման ու հասունացման մյուս, ջերմային ու ջրային խնդիրներն առկա են:

Թերեւս այս բարենպաստությունները նկատի ունենալով էլ Հայաստան երկրի բարձրագույն այրերը դեռ գարնանը հանրությանը ներկայացան մեր մարդկանց պարենային հոգսերը աշնանը թեթեւացնելու խոստումներով: Կառավարման այլ ռեսուրս պարզապես չկար, քանզի աշխատավարձերի ու կենսաթոշակների աճ վերջին տարիներին չէր արձանագրվել, իսկ առաջին անհրաժեշտության տեղական արտադրության գյուղմթերքների գները շեշտակի բարձրացել էին: Հոկտեմբերի 3-րդ տասնօրյակում, երբ դեռ Երեւանում էի, միջին որակի կարտոֆիլը Զեյթուն վարչական տարածքի առեւտրային կետերում ձեռք էի բերում 200 դրամով: Հետաքրքրությունս պարտադրեց զանգահարել ավստրիական Գրաց քաղաք եւ տեղեկանալ, թե նույն ապրանքն ինչ արժե այնտեղ: Պատասխանը ցնցող էր. դե տարբեր գներ կան, սկսած 14 ցենտից, որը մեր 70 դրամն է: Հարգելի երեւանցիներ ու հայաստանաբնակներ, դուք պատրա՞ստ եք հավատալու նման գնի առկայության: Պարզապես պարտադրված եք, քանզի դրա ապացույցն է ոչ միայն «Պեննի» սուպերմարկետի գովազդային թերթիկից վերցված տպագրվող լուսանկարը, որը կատարվել է նոյեմբերի առաջին տասնօրյակում, այլեւ տողերիս հեղինակի կոնկրետ գնումը. Ցանցե փաթեթավորումով 5 կգ կարտոֆիլի դիմաց վճարել եմ 69 ցենտ, ճիշտ լուսանկարում պատկերվածը, որը մեր 350 դրամն է: Հավաստեմ, որ կարտոֆիլն անթերի որակի է, հայաստանյան շուկայում շատ հաճախ հանդիպող այս մշակաբույսին հատուկ ինչ-ինչ խոռոչներ, սեւություն, կտրվածքներ, ներքին փտածություն չունի: Այստեղ չեք հանդիպի նաեւ 300-400 գրամ կշռող կարտոֆիլի պալարների, որոնք առաջանում են քիմիական պարարտանյութերի չարաշահումից: Ավստրիացի տնամերձ հողակտորներ ու հողահատվածներ ունեցողները իրենց մշակովի տարածքները հիմնականում պարարտացնում են սեփական ջանքերով հողին անչափ անհրաժեշտ հումուս տալու օգնությամբ, որի համար որպես հումք առանձնացնում են այգու ու հողամասի բուսային թափոնները ու անգամ իրենց սեղանի սննդի ավելցուկը: Մշակվող տարածքների որոշ մասերում նրանք ունեն ցանցապատ հարմարություններ, ուր լցնում են այդ ամենը, որն էլ արեւի ու անձրեւի ազդեցության տակ արդյունավետ պարարտանյութ է դառնում: Փոխարենը մեզանում ընդունված է դրանք այրել կամ աղբարկղ լցնել, միաժամանակ դժգոհելով քիմիական պարարտանյութերի բարձր գներից: Ի դեպ, այստեղ այգում հենց այնպես կրակ անելը օրենքով պատժվող արարք է, չեմ պարզել միայն՝ վտանգի, թե բնապահպանական առումներով. նախ կարժանանաք բարյացակամ հարեւանի դիտողությանը, նա լինի ավստրիացի թե միգրանտ, հնարավոր է նաեւ, որ ձեզ այցելի համապատասխան պաշտոնյան, անշուշտ՝ ոչ նախազգուշացնողի տրամադրությամբ:




Այստեղ ուզես թե չուզես մտորում ես մեզանում տիրող այն տեսակետի շուրջը, թե հայ հողի մշակը ամեն մասնագետից ու գյուղատնտեսից լավ գիտի իր անելիքը, նրան ոչինչ հուշել կամ ուսուցանել պետք չէ, դուք միայն նրա պահանջները բավարարեք. մատչելի ջուր ու վարկեր տվեք, վառելիք ու պարարտանյութ հասցրեք: Այս պարագայում ինչո՞վ են զբաղված տարածքների կառավարման, էկոնոմիկայի, գյուղատնտեսության նախարարությունների մեծաքանակ պաշտոնյաները, գյուղատնտեսության աջակցության մարզային մինի նախարարություններ հիշեցնող կենտրոնները, հայրենական ու արտերկրի այլեւայլ կառույցները: Իրոք Ավստրիայում դրանց սակավությունից, որոնց խիտառ բացակայությունի՞ց է ավստրիացիներին հաջողվում սուպերմարկետներում ապահովել մսամթերքների մատչելի գները: Եվ սա եվրոպական այս երկրի առեւտրում արձանագրվող զգալի հարկերի պայմաններում: Անգամ «Բիո» մակնշմամբ ստեպղինի 1 կգ-ի դիմաց 300 դրամը կարելի է ընդունելի գին որակել, քանզի ընդհանուր առմամբ այսկերպ աճեցված գյուղմթերքները 30-40 տոկոսով բարձր են գնահատվում: Նկատենք նաեւ, որ նկարներում տեղադրված ավստրիական դրոշակները հավաստում են, որ վաճառվող ապրանքները հիմնականում տեղական ծագում ունեն:

Ընդհանրապես այս երկիրը պարենային հարցում գրեթե ինքնաբավ է բոլոր առումներով: Գրացի տարածաշրջանը կազմող Շտիրիա մարզը, որը մի քանի տասնամյակ առաջ եղել է Ավստրիայի խաղողի մշակության ու գինեգործության հիմնական կենտրոնը, հիմա իր տեղը մասամբ զիջում է անասնապահությանը, որի կերային կարիքները բավարարելու նպատակով ամենուր կարելի է եգիպտացորենի դաշտերի հանդիպել: Թող ներվի համեմատությանս համար, այս օրերին արդեն մշակաբույսի չորացած ցողունները զինվորականների շարասյուներ են հիշեցնում՝ համաչափ տեղադրված ու նույն հասակի: Երկիրն ապահովված է պարենային զամբյուղի հիմնական բաղադրիչներ կազմող կաթնամթերքներով ու մսաստեսակներով, որոնց գները հասանելի են բոլորին: Այսպես էլ ապրում են ծովերից հեռու եւ հարուստ ընդերք չունեցող այս երկրում, հիմնականում ապավինելով իրենց համեստ հողային կարողունակությանը:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
Ավստրիա, Գրաց

# Պայթյունից իրանցի գեներալ է զոհվել

Թեհրանից 25 կմ արեւմուտք գտնվող Շահրիարի շրջանում՝ «Ամիր ալ Մոմենին» ռազմակայանում արկերի տեղափոխման ժամանակ տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվել են 17 եւ վիրավորվել 16 անձինք: Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսին պատկանող ռազմակայանում զոհվածների մեջ է նաեւ գեներալ Հասան Մոկադդամը, որը մարտական հրթիռների մշակման եւ արտադրության իրանական ծրագրի ղեկավարներից մեկն էր: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը՝ վկայակոչելով կորպուսի ներկայացուցչի հայտարարությունը:

Մոկադդամը վճռական դեր էր խաղացել Իրանի պաշտպանական արդյունաբերության զարգացման մեջ, անմիջականորեն ղեկավարել էր հրետանային եւ հրթիռային տարբեր զինատեսակների ստեղծման աշխատանքները: Կորպուսի հայտարարության մեջ ընդգծվում է, որ «Իրանը հենց Մոկադդամին է պարտական իր հրթիռային ծրագրի հաջողության համար»:

ԴԱՄԱՍԿՈՍ

# Սիրիան զայրացած է Արաբական լիգայում իր անդամակցության կասեցումից

## *Թուրք դիվանագետների ընտանիքները տարհանվել են*

Սիրիայի իշխանություններին եւ ժողովրդին սաստիկ զայրացրել է Արաբական լիգայում երկրի անդամակցությունը կասեցնելու այդ կազմակերպության որոշումը: Դա վիրավորական է մանավանդ այն պատճառով, որ Սիրիան Արաբական լիգայի հիմնադիրներից է, ընդգծում է Ֆրանսպրես գործակալությունը: Դամասկոսը Արաբական լիգայից պահանջել է հրավիրել արտակարգ գագաթաժողով, որտեղ կողմերը կփորձեն գտնել սիրիական ճգնաժամի կարգավորման եղանակներ եւ կանխել դրա բացասական հետեւանքներն արաբական աշխարհում:

Լիգայի որոշումն ընդունվել է շաբաթ օրը: Նույն օրվա երեկոյան մոլեգնած սիրիացիները հարձակումներ են սկսել լիգայի որոշմանը հավանություն տված երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների վրա:

Դամասկոսում քարերով եւ շշերով զինված մոտ հազար ցուցարարներ փորձել են գրոհով գրավել Թուրքիայի դեսպանատունը: Նրանց զսպելու նպատակով ոստիկանությունն օգտագործել է արցունքաբեր գազ: Մայրաքաղաքից 330 կմ հյուսիս ընկած Լաթաքիա քաղաքում 5 հազար ցուցարարներ հարձակվել են Թուրքիայի հյուպատոսարանի վրա եւ այրել են այդ երկրի դրոշը: Հարձակումների են ենթարկվել նաեւ Սաուդյան Արաբիայի, Քաթարի եւ Ֆրանսիայի դիվանագիտական ներկայացուցչությունները:

Թուրքիայի իշխանությունները կարգադրել են Սիրիայից դուրս բերել թուրքական դեսպանատան աշխատակիցների մի մասին: Անադոլու գործակալությունը հաղորդում է, որ թուրք դիվանագետների ընտանիքների բոլոր անդամներն արդեն տարհանվել են: Դեսպան Օմեր Օնխոնը եւ թուրքական դիվանագիտական ներկայացուցչության մյուս ղեկավարները, սակայն, կմնան Դամասկոսում:

Արաբական լիգայի անդամ 22 երկրներից 18-ը այն կարծիքին են, թե Սիրիայի իշխանությունները բավարար ջանքեր չեն գործադրում երկրում արյունահեղությունը դադարեցնելու համար, ուստի արժանի են պատժամիջոցների, մասնավորապես՝ անդամակցության կասեցմանը: Լիգան կազմակերպության իր անդամներին կոչ է արել Դամասկոսից հետ կանչել իրենց դեսպաններին:

Լիգայի որոշմանը Թուրքիայի տված հավանությունը կապված է Սիրիայում նախագահ Բաշար Ասադի եւ ընդդիմության միջեւ մարտից շարունակվող զինված դիմակայության հետ: Անցյալում առկա էին թուրք-սիրիական գործընկերային հարաբերություններ, բայց վերջին ամիսներին իրավիճակը փոխվել է: Սեպտեմբերին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հավանություն տվեց Արեւմուտքի պատժամիջոցներին, որոնք ուղղված են «նողկալի հակաթուրքական քարոզչություն» ծավալած սիրիական վարչակարգի դեմ: Բացի դրանից, Էրդողանը ցուցադրաբար այցելեց թուրքական տարածքում գտնվող սիրիացի փախստականների ճամբար:

# Իտալիայի վարչապետն է տնտեսագետ Մարիո Մոնտին



**Իտալիայի նախագահ Ջորջո Նապոլիտանոն կիրակի երեկոյան նախկին եվրոկոմիսար՝ Իտալիայի Կենտրոնական բանկի նախկին նախագահ Մարիո Մոնտիին նշանակել է վարչապետ եւ նրան հանձնարարել է կազմել նոր կառավարություն: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ ավելի վաղ հրաժարական էր տվել Սիլվիո Բեռլուսկոնին, որը Իտալիայի վարչապետն էր դարձել երեք անգամ՝ 1994, 2001 եւ 2008 թվականներին:**

**68-ամյա Մարիո Մոնտին տնտեսագետ է, պրոֆեսոր, Միլանի «Բոկկոնի» հեղինակավոր համալսարանի ռեկտորն է: Նա Եվրոհանձնաժողովում աշխատել է 10 տարի: Անկուսակցական է, ամուսնացած, ունի երկու զավակ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը ընդգծում է, որ Մոնտին սակավախոս է, չի սիրում հարցազրույցներ տալ:**

**Նորանշանակ վարչապետը լրագրողների առջեւ ելույթ ունենալով՝ խոստացել է անհապաղ ձեռնամուխ լինել կառավարության ձեւավորմանը: Նրա խոսքերով՝ իտալացիները համատեղ ուժերով կարող են հաղթահարել երկրի պարտքային ճգնաժամը:**

**Եվրոմիությունը ողջունել է Իտալիայում ազգային միասնության կառավարության ստեղծմանն ուղղված ջանքերը եւ խոստացել է հետեւել այդ երկրի բարեփոխումների ընթացքին, հաղորդում է Ֆրանսպրեսը:**

**Սիլվիո Բեռլուսկոնին հրաժարական տալու որոշում էր ընդունել այն բանից հետո, երբ նոյեմբերի 8-ին խորհրդարանի ստորին պալատում զրկվել էր ձայների մեծամասնությունից: Նրա դեմ հանդես էին եկել ոչ միայն ընդդիմադիրները, այլեւ իր «Ազատության ժողովուրդ» կուսակցության որոշ ներկայացուցիչներ:**

ԳԵՐՄԱՆԻԱ

# Կոմիտաս, Մանսուրյան, Միրզոյան՝
## *«Հայկական տեմպերամենտ» վերնագրյալ համերգում*

Նոյեմբերի 13-ին Նոյսի (Գերմանիայի Հյուսիս Հռենոս Վեսթֆալյան երկրամաս) Ցոյգհաուս համերգասրահում կայացավ «Հայկական տեմպերամենտ» վերնագրյալ համերգը, որ կազմակերպել է Նոյսի գերմանական կամերային ակադեմիան:

Թեեւ «տեմպերամենտ» բառը հայերեն խառնվածք տարբերակով չենք ներկայացրել, բայց ծրագրին նայելով կարելի է հասկանա կազմակերպիչների՝ վերնագրի դիպուկ ընտրությունը. Սողոմոն Սողոմոնյան «Երեք մանրապատկեր ջութակի համար», Տիգրան Մանսուրյան «Կոնցերտ ջութակի եւ 18 լարայինների համար», Էդուարդ Միրզոյան «Սիմֆոնիա լարայինների եւ թմբուկի համար»: (Ծրագրում հենց Սողոմոն Սողոմոնյան է տպված, թեպետ համերգի ծանուցաթերթում գրված է նաեւ Կոմիտաս անունը- Ան. Հ.):

Նոյսի գերմանական կամերային ակադեմիան ղեկավարում էր Էդուարդ Թոփչյանը, մենակատարը ջութակահարուհի Անուշ Նիկողոսյանն էր:



*Ջութակահարուհի Անուշ Նիկողոսյան*

«Արեւելք-արեւմուտք սահմանագծին է Հայաստանը, նրա արվեստը խորապես կրում է երկու աշխարհների դրոշմը՝ արեւելյան հնչյուններ, ազգագրական ռիթմ ու եվրոպական ավանդույթ: Քրիստոնեությունն առաջինը պետական կրոն հռչակած երկրի ու Թուրքիայում հայերի կրած տառապանքների անդրադարձը կա հայ բազմածալ՝ երրորդ դարում արդեն սկզբնավորված երաժշտարվեստում», հայ երաժշտությանը նվիրված համերգային ազդագիրն այսպիսի գովազդ է ներկայացնում:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

# Նվիրում Ալեքսանդր Սպենդիարյանի 140-ամյակին

**Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղ. ղեկ. եւ գլխ. դիրիժոր Էդուարդ Թոփչյանի գլխավորությամբ շարունակում է հոբելյանական համերգների շարքը: Նոյեմբերի 18-ին, ժամը 19-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կայանալիք համերգը նվիրվում է կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի 140-ամյակին: Համերգի ընթացքում կհնչեն Ալ. Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, «Էտյուդ հրեական թեմաներով», «Ղրիմյան էսքիզներ», «Էնզելի»՝ «Երեւանյան էտյուդներից», սիմֆոնիկ եւ վոկալ հատվածներ «Ալմաստ» օպերայից: Առաջին անգամ Հայաստանում կհնչի Ռիխարդ Շտրաուսի տերցետ «Վարդերի ասպետը» օպերայից: Համերգի մենակատարներն են Մարինե Դեհնյանը, Մագդա Մկրտչյանը, Քրիստինե Սահակյանը (սոպրաններ) եւ Պերճ Քարազյանը (տենոր): Համերգի դիրիժորն է Հարություն Արզումանյանը:**



**Մ. Մ.**

# Գիտաժողով նվիրված Անի մայրաքաղաքի 1050-ամյակին

Նոյեմբերի 15-ին, ժամը 10-ին ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում կմեկնարկի «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն» խորագրով միջազգային գիտաժողովը: Այն իր աշխատանքները կշարունակի մինչեւ նոյեմբերի 17-ը, որին մասնակցելու են Հայաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի եւ Ավստրիայի առաջատար գիտնականներ:

## Այսօր
### հետահայաց ցուցահանդես



*Մեծ գեղանկարիչ Վարուժան Վարդանյանի*

*հետահայաց ցուցահանդեսը տեղի կունենա այսօր, նոյեմբեի 15-ին, Հայաստանի նկարիչների միության ցուցասրահում,*

***ժամը 15:00-ին***



# ՌԴ ժողովրդական արտիստ Վենիամին Սմեխովը կրկին Երեւանում է

**Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարությունների համատեղ նախաձեռնությամբ 2008 թ. կյանքի կոչվեց «Հայաստանում ռուսական մշակույթի սեզոններ» նախագիծը ու դարձավ սպասված իր բազմաբնույթ, բարձրարժեք արվեստի մատուցմամբ: «Ազգը» պարբերաբար անդրադարձել է այդ ծրագրին:**

**Հիշեցման կարգով նշեմ, որ ընթացիկ տարում այդ նախագծի շրջանակներում ապրիլին ներկայացվեց համատեղ ջազային ծրագիր՝ ՌԴ- Օլեգ Լունդստրեմի ջազ նվագախմբի եւ ՀՀ-ի ջազ բենդի մասնակցությամբ: Իսկ հունիսին Ռուսաստանի օրվա կապակցությամբ Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետ. թատրոնում մեծ հաջողությամբ կայացավ ՌԴ ժող. արտիստ Վլադիմիր Դեւյատովի «ЯР-марка» խմբի համերգը: Սունդուկյան թատրոնում ներկայացվեց Մոսկվայի Չեխովի անվան միջազգային թատերական փառատոնի**



**եւ Լոնդոնի «Չիկ բայ ջաուլ» թատրոնի համատեղ նախագիծը՝ Շեքսպիրի «12-րդ գիշեր» հանրահայտ ներկայացումով: Բոլորովին վերջերս Հայաստանում հյուրընկալվեց Բորիս Գրաչեւսկին «Հանդիպումներ Երալաշի հետ» ծրագրով՝ «Ռոլան Բիկովի» փառատոնի շրջանակներում:**

**Առաջիկայում՝ դեկտեմբերին, հայ թատերասերները հնարավորություն կունենան նախագծի շրջանակներում ծանոթանալ նաեւ Առնո Բաբաջանյանի եւ Միքայել Թարիվերդիեւի հոբելյաններին նվիրված համատեղ նախաձեռնությանը: Ներկայումս «Հայաստանում ռուսական մշակույթի սեզոններ» ծրագրի շրջանակներում նոյեմբերի 12-16-ը Հայաստան են ժամանել թատրոնի եւ կինոյի անվանի դերասան, գրող, ՌԴ ժող. արտիստ Վենիամին Սմեխովը տիկնոջ՝ արվեստագիտության թեկնածու, Ա. Չեխովի անվան Մոսկվայի գեղարվեստական թատրոնի՝ МХТ-ի դպրոց-ստուդիայի դոցենտ, թատերական քննադատ Գալինա Աքսիոնովայի հետ:**

**Երեկ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը ներկայացրեց հյուրերին ու բարձր գնահատեց 3-րդ անգամ Հայաստան ժամանելու, այստեղ վարպետության դասեր անցկացնելու համար: Այսօր՝ նոյեմբերի 15-ին, ժամը 20-ին Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում տեղի կունենա Վենիամին Սմեխովի ստեղծագործական երեկոն:**

**Վ. Սմեխովը նկարահանվել է ավելի քան 25 ֆիլմերում, թատրոնի բեմերում կերպավորել է 5 տասնյակից ավելի դերեր, ՌԴ-ում եւ արտերկրում հայտնի է որպես դրամատիկական եւ օպերային ներկայացումների բեմադրիչ: Ներկայումս նա ԱՄՆ-ի համալսարաններում դասավանդում է դերասանի վարպետություն: Իսկ նրա չափածո եւ արձակ ստեղծագործությունները ձեռքից ձեռք են անցնում:**

**Սմեխովը պատասխանելով «Ազգի» հարցերին՝ ասաց, որ դեռ երիտասարդ տարիքից շատ է հավանել հայ պոեզիան, հատկապես Չարենցի գործերը, որոնց ծանոթացել է Լիսիցյանների միջոցով ու այդ օրվանից հրապուրվել է հայ պոեզիայով: Նրա կարծիքով՝ այսօր աշխարհում ուշադրություն չեն դարձնում խոսքի, բառի նշանակությանը, մինչդեռ ամենուր անաղարտ խոսքի կարիքը զգացվում է: Արվեստագետը նաեւ դժգոհ էր լրագրողներից, որոնք «անպայման մի սողանցք, մի թերություն են գտնում, սենսացիա ստեղծում չեղած տեղից ու այդ դաշտը դառնում է անտանելի եւ անհետաքրքիր: Մի բան, որը չկար փթած սովետական համակարգում...»:**

**Եվ խորհուրդ տվեց ամեն ինչում նախ լավը տեսնել, լավին անդրադառնալ, որով էլ վատը կմղվի հետին պլան: Գալինա Աքսիոնովան նույնպես խոսեց գրաքննադատության, թատերական աշխարհում տիրող անհանդուրժողական, մեծամտության շուրջը, հույս հայտնեց, որ երիտասարդ սերունդն ի զորու է շտկել դրանք՝ զերծ մնալով Ստանիսլավսկու եւ Վախթանգովի սիստեմաներից ու կստեղծի իր նոր սիստեմը՝ նոր ոճն ու ասելիքը:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Մանկական Եվրոտեսիլ 2012-ը կկայանա Նիդեռլանդներում

**Օրերս Հայաստանում տեղի ունեցած Եվրոտեսիլի պատվիրակությունների նախագահների ժողովի ընթացքում քննարկվել են նաեւ Մանկական Եվրոտեսիլ 2012-ի հյուրընկալող երկրի հնարավոր տարբերակները: Եվրոպայի Հեռարձակողների միության որոշմամբ Մանկական Եվրոտեսիլ 2012-ի հյուրընկալող երկիր է ընտրվել Նիդեռլանդները, որի իրավունքը շահել է հոլանդական «Avro» հեռուստաընկերությունը: Դեռեւս կոնկրետ օրը եւ հյուրընկալող քաղաքը որոշված չեն, բայց Մանկական Եվրոտեսիլի նախագահ Սիթսե Բեքերը նշում է, որ Եվրոպայի Հեռարձակողների միությունը հույս ունի, որ մյուս տարի ավելի շատ երկրներ մասնակցության հայտ կներկայացնեն:**

**2007թ. եւս «Avro» հեռուստաընկերությունը հյուրընկալել է Մանկական Եվրոտեսիլը՝ Ռոտերդամ քաղաքում:**

**Նշենք, որ այս տարի Մանկական Եվրոտեսիլի հյուրընկալման իրավունքը շահել է Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունը Եվրոպայի Հեռարձակողների միության վերստուգող հանձնաժողովի որոշմամբ: Այն այս տարի տեղի կունենա դեկտեմբերի 3-ին Կ. Դեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիրում, որին կմասնակցի 13 երկիր՝ Ռուսաստանի Դաշնություն (Կատյա Ռյաբովա), Լատվիա (Ամանդա Բաշմակովա), Մոլդովա (Լերիսա), Հայաստան (Դալիթա), Բուլղարիա (Իվան Իվանով), Լիտվա (Պաուլինա) , Ուկրաինա (Կրիստալ), Մակեդոնիա (Դորիջան), Նիդեռլանդներ (Ռաքել), Բելառուս (Լիդիա Զաբլոտսկայա), Շվեդիա (Էրիկ), Վրաստան (Քենդի), Բելգիա (Ֆեմկե):**

**Հավելենք, որ նոյեմբերի 20-ին ժամը 14:00-ին Կասկադում տեղի կունենա «Մանկական Եվրոտեսիլ 2011»-ին նվիրված «ֆլեշմոբ»: Միջոցառման մասնակիցները կկանգնեն Կասկադի աստիճաններին եւ ազդանշանը լսելուն պես կկքանստեն՝ Junior Eurovision եւ 2011 Dalita գրառումները պատկերելու համար:**

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# «Ոսկե ծիրան կինոփառատոն անիվների վրա»՝ Ջավախքում

«Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնը արդեն 5-րդ անգամ կհյուրընկալվի Ջավախքում: «Ոսկե ծիրանը անիվների վրա» ծրագրի շրջանակներում նոյեմբերի 10-14-ը Ախալքալաքում կկայանա հայ-վրացական կինոփառատոնը: Կցուցադրվեն «Ոսկե ծիրան» 8-րդ կինոփառատոնի ֆիլմերի ընտրանին եւ Վրաստանի ազգային կինոկենտրոնի կողմից վերջին տարիներին ստեղծված լավագույն ֆիլմերը:

Ծրագրի բացումը տեղի կունենա նոյեմբերի 10-ին, Ախալքալաքի «Ապագայի տուն» կենտրոնում՝ «Ոսկե ծիրան» կինոդահլիճում:

«Ոսկե ծիրանը անիվների վրա» կինոփառատոնը իրականացվում է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի հովանավորությամբ:

«Ոսկե ծիրանը» Ջավախքում կինոփառատոնն իրականացվում է «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի, ՀՀ-ում Վրաստանի դեսպանության, Վրաստանի ազգային կինոկենտրոնի հետ համագործակցությամբ:

# Անդրադարձ

Հոկտեմբերի 8-ի համարում «**Ազգը**» անդրադարձել էր սփյուռքահայ հայտնի մտավորական եւ հասարակական գործիչ Պերճ Թերզյանին ՀՀ նախագահի «Մխիթար Գոշ» մեդալի տվչության արարողությանը սփյուռքի նախարարությունում: Հոդվածագիրն այդ առթիվ հիշատակել էր պրն Թերզյանի կենսագրությունից որոշ տվյալներ՝ հիմնվելով նախարարության հրապարակած հաղորդագրության վրա: Կապ հաստատելով խմբագրության հետ, պրն Թերզյանը խնդրեց ուղղել որոշ տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես շեշտեց, որ ինքը Թեքեյան մշակութային միության մաս չի կազմում, ոչ էլ Կահիրեի «Արեւ» օրաթերթի խմբագրական խորհրդի, այլ արաբալեզու «Արեգ» ամսագրի հիմնադիրն ու խորհրդականն է: Նշելով որ, իրոք, ինքը հեղինակ է երկու գրքի, պրն Թերզյանը բացատրեց սակայն, որ դրանք տարբեր տարիների «Արեւ» օրաթերթում եւ սփյուռքահայ այլ պարբերականներում իր ստորագրած հոդվածների համահավաք ժողովածուներն են, իսկ ինչ վերաբերում է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ սրբազանի խոսքի այն հատվածին, թե Պերճ Թերզյանը «մեծ ներդրում ունի եգիպտահայ համայնքի ձեւավորման գործում», համարեց չափազանցություն:

ԱԶԳ **Մարզական**

# Հայ ծանրորդները վերջնականապես ձախողվեցին Փարիզում

Փարիզում ավարտվեց ծանրամարտի աշխարհի հերթական առաջնությունը, որում բացի մեդալներից, խաղարկվում էին նաեւ Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրերը: Ցավոք, առաջնությունում շատ անհաջող հանդես եկան հայ ծանրորդները: Մեր 10 ծանրորդները միայն մեկ փոքր բրոնզե մեդալ նվաճեցին: Այն բաժին հասավ մինչեւ 77 կգ քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Տիգրան Գեւորգի Մարտիրոսյանին: Առաջնության արդյունքներով Հայաստանի տղամարդկանց հավաքականը գրավեց 18-րդ տեղը եւ Լոնդոնի օլիմպիադայի 4 ուղեգիր նվաճեց: Իսկ Հայաստանի կանանց հավաքականը, որը նախորդ առաջնությունից հետո 9-րդ տեղում էր ու 4 ուղեգրի էր հավակնում, 2 մրցաշարերի արդյունքով վաստակելով 98 միավոր, գրավեց 21-րդ տեղը եւ Լոնդոնում ներկայացված կլինի միայն 2 մարզուհով:

Առաջնությունում մեր ծանրորդների անհաջող մեկնարկից հետո մարզասերները սպասում էին, որ գոնե գերծանրքաշայինները կարդարացնեն սպասելիքները: Դրանք հատկապես մեծ էին Հռիփսիմե Խուրշուդյանից եւ Ռուբեն Ալեքսանյանից:

Հռիփսիմեն հաջող սկսեց մրցումները՝ պոկում վարժության առաջին մոտեցմամբ բարձրացնելով 125 կգ: Սակայն 2-րդ մոտեցման ժամանակ 130 կգ-ը բարձրացնելիս, նա ձեռքի վնասվածք ստացավ ու չկարողացավ շարունակել պայքարը: Հիվանդանոցում պարզվեց, որ բարեբախտաբար նրա ձեռքը չի կոտրվել, այլ խախտվել է տեղից: Ամեն դեպքում Խուրշուդյանը, որ հավակնում էր գոնե բրոնզե մեդալի, 0 ստացավ:

75 կգ-ից բարձր քաշային կարգում աշխարհի չեմպիոնուհու տիտղոսին արժանացավ չինացի Լուլու Ջժոուն, որը երկամարտում ցույց տվեց 328 կգ (146+182) արդյունք: Ընդ որում հրում վարժությունում նա 1 կգ-ով գերազանցեց իրեն պատկանող աշխարհի ռեկորդը: Աշխարհի նոր ռեկորդ սահմանեց նաեւ ռուսաստանցի Տատյանա Կաշիրինան, որը պոկում վարժությունում բարձրացրեց 147 կգ եւ 1 կգ-ով բարելավեց իր նախկին լավագույն ցուցանիշը: Կաշիրինան երկամարտի 322 կգ (147+175) արդյունքով գրավեց 2-րդ տեղը: Բրոնզե մրցանակակիր դարձավ ուկրաինացի Օլգա Կորոբկան, որը ցույց տվեց 284 կգ (127+157) արդյունք:

Քաշային այս կարգում Հայաստանի 2-րդ ներկայացուցիչը՝ 22-ամյա Նաիրա Հարությունյանը երկամարտի 191 կգ (81+110) արդյունքով գրավեց 24-րդ տեղը՝ առաջ անցնելով միայն 0 ստացած 4 ծանրորդուհիներից:

Սպասելիքները չարդարացրեց նաեւ Ռուբեն Ալեքսանյանը: Գերծանրքաշայինների մրցավեճում 21-ամյա ծանրորդը հաջորդաբար բարձրացնելով 180 եւ 185 կգ, հրաժարվեց պոկում վարժության 3-րդ մոտեցումից՝ ուժերը պահելով հրում վարժության համար: Այստեղ մեր մարզիչները երեւի թե գերագնահատեցին Ռուբենի հնարավորությունները: Նրանք նախնական քաշը պատվիրել էին 240 կգ: Առաջին մոտեցման ժամանակ հայ ծանրորդը մեծ դժվարությամբ բարձրացրեց ծանրաձողը, սակայն մրցավարները չհաշվեցին քաշը, քանի որ նա մի ոտքով հարթակից դուրս էր եկել: Այդ անհաջողությունից հետո զգացվեց, որ Ալեքսանյանը հոգեբանորեն պատրաստ չէ նման ծանրության ծանրաձողը բարձրացնելու: Այդպես էլ եղավ: Ռուբենը 0 ստացավ ու զրկեց Հայաստանին հաշվարկային միավորներից:



Մեր մյուս դյուցազնը՝ Հայկ Հակոբյանը հանդես եկավ B խմբում: Նա երկամարտի 395 կգ (180+215) արդյունքով զբաղեցրեց 15-րդ տեղը 43 մասնակիցների մեջ, ինչն ընդհանուր առմամբ վատ ցուցանիշ չէ 21-ամյա հայ ծանրորդի համար:

Ի տարբերություն հայ ծանրորդների, բոլորին հիացրեց աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացած իրանցի Բեհդադ Սալիմիկորդասիաբին, որը վստահ ելույթ ունեցավ՝ գերազանցելով աշխարհի ռեկորդը: Նա երկամարտում ցույց տվեց 464 կգ (214+250) արդյունք: 2-րդ տեղը գրավեց իրանցի մեկ այլ ծանրորդ՝ Սաջադ Անուշիրավանի Համլաբադը, որը երկամարտում ցույց տվեց 439 կգ (198+241) արդյունք: 433 կգ (192+241) արդյունքով բրոնզե մրցանակակիր դարձավ կորեացի Սան Գուեն Խեոնը:

Կրկին անդրադառնալով հայ ծանրորդների ելույթներին, նշենք, որ Փարիզի աշխարհի առաջնությունն ամենաանհաջողն էր վերջին տարիներին հայկական ծանրամարտի համար: 10 ծանրորդներից 4-ը՝ Վանիկ Ավետիսյանը, Մելինե Դալուզյանը, Հռիփսիմե Խուրշուդյանն ու Ռուբեն Ալեքսանյանը 0 ստացան, ինչը մտահոգիչ է: Առջեւում հաջորդ տարի կայանալիք Եվրոպայի առաջնությունն ու օլիմպիական խաղերն են, որոնց հարկավոր է ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ նախապատրաստվել, որպեսզի չկրկնվի այն, ինչ տեղի ունեցավ Փարիզում:

# Հայ հանդբոլիստները զբաղեցրին 2-րդ տեղը

**Մայրաքաղաքի «Միկա» մարզահրահում ավարտվեց ՀՀ վարչապետի գավաթի խաղարկության հանդբոլի 3-րդ միջազգային մրցաշարը: 3 օր շարունակ 4 հավաքականներ համառ մրցապայքարում որոշեցին մրցաշարի մրցանակակիրներին:**

**Ինչպես նախորդ տարի, այս անգամ էլ արտերկրի խաղացողներով համալրված Հայաստանի հավաքականը մրցաշարում զբաղեցրեց 2-րդ տեղը: Առաջին մրցախաղում մեր հանդբոլիստները 33-22 հաշվով առավելության հասան վրացիների նկատմամբ: Արդեն առաջին խաղակեսում մեր հավաքականը զգալի առավելություն ուներ եւ ընդմիջման գնաց 20-8 հաշվով հաղթելով: Ընդմիջմանը Հայաստանի հավաքականի մարզիչները փոխարինեցին հիմնական խաղացողներին՝ հնարավորություն ընձեռելով խաղին մասնակցելու հնարավորություն տալ նաեւ պահեստայիններին: Դա անդրադարձավ ուժերի հարաբերության վրա: Վրացիներին հաջողվեց որոշ չափով կրճատել գնդակների տարբերությունը:**

**Այդ խաղում մեր թիմից ամենաարդյունավետը Հայկ Կարապետյանն էր, որը 9 գոլ խփեց: 6-ական անգամ աչքի ընկան Ֆրանկ Ֆեներյանն ու Սամվել Ասլանյանը:**




**2-րդ տուրում մեր հավաքականի մրցակիցը Ռուսաստանի թիմն էր, որը կազմավորված էր Կրասնոդարի ՖԻՄԱ-ի խաղացողներով: Վերջինս 1-ին խաղում 44-24 հաշվով հաղթել էր ուզբեկներին: Այս անգամ արդեն առաջին խաղակեսում ռուսները զգալի առավելության հասան՝ 20-8: Ընդմիջումից հետո մեր հանդբոլիստներին հաջողվեց կարգավորել խաղը ու նույնիսկ 2-րդ խաղակեսը շահել 19-14 հաշվով, սակայն ընդհանուր 34-27 հաշվով հաղթեցին ռուսները: Այդ խաղում մեր թիմից հատկապես աչքի ընկան Սամվել Ասլանյանը (11 գոլ) եւ Հայկ Կարապետյանը (9): Տուրի մյուս խաղում ուզբեկները 41-28 հաշվով հաղթեցին վրացիներին:**

**Երեկ կայացած ավարտական տուրն անվանեց մրցանակակիրներին: Հայաստանի հավաքականը 41-33 հաշվով հաղթելով ուզբեկներին, գրավեց 2-րդ տեղը: Այդ հանդիպումը փաստորեն 2-րդ տեղի համար մրցավեճ էր: Ուզբեկները գրավեցին 3-րդ տեղը: Իսկ մրցաշարի հաղթող դարձավ Ռուսաստանի հավաքականը, որը 65-23 հաշվով ջախջախեց վրացիներին: Ռուսաստանի հավաքականին գավաթը հանձնեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Մրցաշարին ներկա էր հատուկ այդ նպատակով Երեւան ժամանած հանդբոլի Եվրոպայի ֆեդերացիայի նախագահ Թոր Լիանը:**

**ՇԱԽՄԱՏ**

# Զավեն Անդրեասյանը հաղթահարեց առաջին փուլը

**Մագնիտոգորսկում մեկնարկել է շախմատի Ռուսաստանի գավաթի եզրափակիչ փուլը, որն անցկացվում է նոկաուտ համակարգով: Տղամարդկանց մրցաշարին մասնակցում են 16, կանանց մրցաշարին՝ 8 շախմատիստներ:**

**Մրցակիցները միմյանց հետ 2 պարտիա են անցկացնում: Հավասար արդյունքի դեպքում հաղթողը որոշվում է լրացուցիչ մրցախաղում: Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեց անցյալ տարվա ՌԴ գավաթակիր Զավեն Անդրեասյանը,որը 1,5-0,5 հաշվով հաղթեց Դվոյրիսին:**

# Մեդալներ անհատական հաշվարկով



**Թեեւ շախմատի Եվրոպայի թիմային առաջնությունում Հայաստանի հավաքականին չհաջողվեց մրցանակակիր դառնալ, սակայն առանձին խաղատախտակների վրա ցույց տված արդյունքներով 3 հայ շախմատիստներ արժանացան մեդալների:**

**Առաջին խաղատախտակի վրա Լեւոն Արոնյանը դարձավ արծաթե մրցանակակիր: Լեւոնը 8 հնարավորից վաստակել էր 5,5 միավոր: Ոսկե մեդալը հանձնվեց անգլիացի Մայքլ Ադամսին, իսկ բրոնզե մեդալը ստացավ գերմանացիների առաջատար Արկադի Նայդիչը:**

**Մեր թիմում լավագույն արդյունքը ցույց տված Գաբրիել Սարգսյանը 4-րդ խաղատախտակի վրա արժանացավ արծաթե մեդալի՝ ոսկին զիջելով Գերմանիայի ներկայացուցիչ Յան Գուստաֆսոնին, որի հետ վճռորոշ պարտիան ավարտեց ոչ-ոքի: Հետաքրքրական է, որ եթե Գաբրիելը հաղթեր ու գերմանացիների հետ մրցավեճն ավարտվեր ոչ-ոքի, ապա չեմպիոն կհռչակվեր Ադրբեջանի հավաքականը, իսկ մերոնք կգրավեին 2-րդ տեղը: Հիշեցնենք, որ Գաբրիելը 9 հնարավորից 6,5 միավոր էր վաստակել:**

**3-րդ խաղատախտակի վրա բրոնզե մեդալի արժանացավ Վլադիմիր Հակոբյանը, որը 8 պարտիաներում 5 միավոր էր վաստակել: Լավագույն արդյունքը ցույց տվեց ադրբեջանցի Շահրիյար Մամեդյարովը, իսկ արծաթե մեդալը բաժին հասավ ռուսաստանցի Սերգեյ Կարյակինին:**

# Արոնյանը կմասնակցի Տալի հուշամրցաշարին

**Վաղը Մոսկվայում կմեկնարկի Միխայիլ Տալի շախմատի ավանդական հուշամրցաշարը, որի մասնակիցների թվում է Լեւոն Արոնյանը: Նրա մրցակիցներն են աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդը, ՖԻԴԵ-ի դասակարգման ցուցակի առաջատար Մագնուս Կառլսենը, Վլադիմիր Կրամնիկը, Վասիլի Իվանչուկը, Սերգեյ Կարյակինը, Հիկարու Նակամուրան, Պյոտր Սվիդլերը, Բորիս Գելֆանդը եւ Յան Նեպոմնյաշչին: Մասնակիցների միջին վարկանիշը 2776 է, որը համապատասխանում է ՖԻԴԵ-ի 22-րդ կարգին:**

# Ռաֆայել Նազարյանը կշարունակի աշխատանքը

**Ինչպես տեղեկացանք «Բանանց» ակումբից, թիմի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը կշարունակի աշխատանքը: Ակումբի ղեկավարությունը գոհ է նրա աշխատանքից եւ մտադիր է երկարաձգել պայմանագիրը, որն ավարտվում է այս տարվա վերջին:**

**Հիշեցնենք, որ Ռաֆայել Նազարյանը «Բանանցի» ղեկը ստանձնել էր առաջնության 1-ին շրջանից հետո՝ փոխարինելով Ստեւիցա Կուզմանովսկուն: Նազարյանի գլխավորությամբ «Բանանցը» զգալի առաջընթաց ապրեց ու նույնիսկ հավակնում էր մրցանակային տեղի, սակայն ավարտական տուրում չկարողացավ հաղթել «Գանձասարին»:**

# Իռլանդացիներն ու խորվաթները լուծեցին ուղեգրի հարցը

**Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության անցումային առաջին հանդիպումներից հետո Իռլանդիայի ու Խորվաթիայի հավաքականները գործնականում ապահովեցին եզրափակիչի ուղեգրերը: Իռլանդացիները Տալլինում 4-0 հաշվով ջախջախեցին էստոնացիներին: Արդեն 13-րդ րոպեին Էնդրյուսը գլխի հարվածով բացեց հաշիվը: Ընդմիջումից հետո Ուոլտերսը 2-րդ գոլը խփեց, ապա 2 անգամ աչքի ընկավ Ռոբի Քինը:**

**Անսպասելի էր Ստամբուլում գրանցված խոշոր հաշիվը: Խորվաթները 3 անպատասխան գնդակ խփեցին թուրքերի դարպասը: Արդեն 2-րդ րոպեին Օլիչը բացեց հաշիվը, իսկ մինչեւ ընդմիջում Մանջուկիչը 2-րդ գոլը խփեց: 2-րդ խաղակեսում Չորլուկան վերջակետ դրեց հանդիպմանը:**

**Եզրափակիչի ուղեգրի նվաճման հույս ներկայացրեց նաեւ Չեխիայի հավաքականը, որը սեփական հարկի տակ Պիլարժի եւ Սիվոկի խփած գոլերի շնորհիվ հաղթեց Չեռնոգորիայի ընտրանուն: Իսկ ահա Բոսնիա-Պորտուգալիա մրցախաղում դարպասները մնացին անառիկ: Այսօր կկայանան պատասխան հանդիպումները, որոնք էլ կանվանեն ուղեգրերի 4 երջանիկ տերերին:**

# Վետերանները սկսում են մրցավեճը

**Այսօր Խորվաթիայի Օպատիա քաղաքում մեկնարկում է շախմատի վետերանների 21-րդ առաջնությունը: Մրցաշարին մասնակցում են 60-ն անց տղամարդիկ եւ 50-ն անց կանայք: Տղամարդկանց մրցաշարում հանդես կգան 209 շախմատիստներ, կանանց մրցավեճին կմասնակցեն 41 շախմատիստուհիներ:**

**Հայաստանից տղամարդկանց մրցաշարին կմասնակցի Հարություն Տեր-Պետրոսյանը: Նա իր վարկանիշով (1959) մասնակիցների մեջ 160-րդն է: Ամենաբարձր վարկանիշն ունի Ֆրանսիան ներկայացնող Անատոլի Վայսերը (2555): Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 11 տուրով: Կանանց մրցաշարի մասնակիցների թվում է Ռուսաստանը ներկայացնող Անատոլիա Աբրահամյանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Ortr»՝ հայկական կինոյի եւ թատրոնի մասին




Պրահայում լույս տեսնող «Ortr» ամսագրի բացառիկ թողարկումը նվիրված է հայկական կինոյին եւ թատրոնին: Խմբագրակազմն ամսագրում ամփոփել է անկախության 20 տարվա ընթացքում հայկական կինոյի եւ թատրոնի ձեռքբերումները, նաեւ 2012-ին հայ կինոյի 100-ամյակին ընդառաջ ներկայացրել բացառիկ հարցազրույցներ հայկական կինոյի ամենահեղինակավոր դեմքերից՝ Վիգեն Չալդրանյան, Երվանդ Մանարյան, Հարություն Խաչատրյան:

Հայկական կինոյի եւ թատրոնի հոգսերը երբեք չեն վերջանում: Նրանք ունեն ֆինանսական, տեղի եւ այլ խնդիրներ: Քսան տարին բոլորած Համազգային թատրոնը սեփական շենք չունի: Նույն վիճակում է նաեւ Մնջախաղի պետական թատրոնը: «Հայ Ֆեստ» փառատոնի նախագահ Արթուր Ղուկասյանի մեկնաբանությամբ՝ մշակույթը չպետք է մտցնել սոցիալական ոլորտ: «Եթե նույն հարթակի վրա դնենք երկու հարցադրում՝ թատրոնի՞ն պետք է գումար տալ, թե՞ աուտիզմով հիվանդ երեխաների մանկատանը, հասարակության 99 տոկոսը գումարը կտա մանկատանը: Մինչդեռ երկուսին էլ պետք է տրվի, քանի որ եթե չլինի մշակույթ, ամբողջ ազգը կհայտնվի դանդաղ աուտիզմի մեջ»:

Սփյուռքի եւ Հայաստանի տարբեր բեմերում հանդես եկած դերասանուհի Նորմա Արմանիի գնահատմամբ՝ հայաստանցի հանդիսատեսը շատ զարգացած է. միջազգային թատրոնին ավելի տեղյակ, չի սիրում թեթեւ կամ անիմաստ ներկայացումներ: Ֆրանսահայ դերասան Ժիրայր Փափազյանի մեկնաբանությամբ՝ հայկական թատրոնը 1970-ականների մակարդակի վրա է: «Հաստկապես խաղաոճը: Երիտասարդները խաղում են այնպես, ինչպես 20 տարի առաջ: Տաղանդավոր ջահելներ կան: Համազգայինում Սարոյանի գործը տեսա, լավ երիտասարդներ կային, բայց ոճը հին էր»:

Թեպետ հայկական կինոն վերջին 20 տարվա ընթացքում զարգացում ապրեց, սակայն մայրաքաղաքում գործում է ընդամենը 2 կինոթատրոն: Կինոգետ Սիրանույշ Գալստյանին անհանգստացնում է, որ երիտասարդները հայկական կինոյից պատկերացում չունեն, թեպետ արդեն մի քանի տարի անցկացվում է «Ոսկե ծիրան» կինոփառատոնը, իսկ այս տարվա ամենաբարձր մրցանակին արժանացել է հայ երիտասարդ ռեժիսորի ֆիլմը: «Մայրիկ», «Արարատ», «Դրախտի թռչուններ», «Ջրահարս», «Շների կղզին», «Ճչացողները». սրանք անկախության տարիներին սփյուռքում ստեղծված այն ֆիլմերն են, որոնք կինոգետ Ֆելիքս Բախչինյանն առաջարկում է դիտել: Սիրանույշ Գալստյանն էլ առանձնացրել է անկախության տարիներին Հայաստանում նկարահանված 20 լավագույն ֆիլմերը՝ «Ընկեր Փանջունի», «Ուրախ ավտոբուս», «Պոետի վերադարձը», «Քրմուհին», «Խճճված զուգահեռներ», «Պիեռլեկինո կամ օդից թեթեւ»:

Ամսագիրը հետաքրքրական եւ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ամերիկյան կինոյի, թատրոնի եւ հեռուստաընկերության դերասանուհի, երգչուհի Ադրիեն Բարբյոյի հայկական արմատների մասին: «Շատ բան գիտեմ իմ նախնիների ողբերգության մասին: Դառնալով դերասանուհի՝ որոշեցի երբեք չխաղալ զոհերի, այլ միայն ուժեղ եւ հաստատակամ կանանց դերեր: Ես հայ եմ: Այնքանով, որքանով դա ինձ հետաքրքրում է, ամեն ինչ բացատրելի է դառնում: Բացառությամբ իմ քթի, այն ֆրանս-կանադական է, իմ մեջ մնացածը հայկական է՝ գանգուր մազերը, մեծ կրծքերը, շոու-բիզնեսում 45 տարի դիմանալու կարողությունը, որոնք ինձ փոխանցել են 1915-ի թուրքական եղեռնից փրկված իմ նախնիները: Իրականում իմ կեսն է հայ, սակայն դա այն կեսն է, որի մեջ ես մեծացել եմ... Ինձ դուր է գալիս մարդկանց ասել, որ ես հայ եմ: Մենք ինքնատիպ ենք, հուզիչ խորհրդավոր: Գիտենք ինչպես պետք է պարել»:

1989-ին Ադրիենը միացավ այն հայտնի ամերիկացի երգիչներին, ովքեր անգլերենով կատարեցին Շառլ Ազնավուրի «Քեզ, Հայաստան» երգը: Նույն թվականին Լոս Անջելեսում նա վարեց Հայ օգնության միությանն առընթեր գործող Հայաստանի երկրաշարժից տուժածների օժանդակության հիմնադրամի կազմակերպած հանդիսությանը:

Հայ-չեխական հավելվածում ամսագիրն անդրադառնում է մանկատանն ապրող երեխաների խնդրին Հայաստանում եւ Չեխիայում, Պրահայում Հայաստանի անկախության 20-ամյակին եւ Չեխիայում ՀՀ նոր դեսպան Տիգրան Սեյրանյանին:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Հայտնի են դարձել Orange գրքի մրցանակակիրների անունները

Նոյեմբերի 11-ի երեկոյան տեղի ունեցավ «Orange գրքի մրցանակ 2011» գրքի մրցույթի մրցանակաբաշխությունը, որի ընթացքում ամփոփվեցին մրցույթի արդյունքները եւ հայտարարվեցին հաղթողների անունները:

Վեպ. «Շների համաստեղությունը» (Նարինե Կռոյան) - 924 քվե

Էսսե. «Կամուրջ դեպի Տանյան՝ արտասովոր բանաստեղծն ու կինը» (Վիոլետ Գրիգորյան) - 309 քվե

Պատմվածք. «Ֆուտբոլի գնդակի երազանքը» (Տաթեւ Դերզյան) - 1506 քվե

«Սցենար» եւ «հեքիաթ» կատեգորիաներում երկրորդ փուլում ներկայացվել էին մեկական գործ, որոնք էլ ճանաչվում են հաղթող այդ կատեգորիաներում.

Սցենար. «Չարենց» (Վահրամ Մարտիրոսյան):

Հեքիաթ. «Անկիմյուրի բնակիչները» (Արմինե Աբրահամյան):

Յուրաքանչյուր ժանրում հաղթող ճանաչված ստեղծագործությունը կհրատարակվի առանձին գրքով, 500 տպաքանակով:

Մրցանակաբաշխության երեկոյի ժամանակ Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան** շնորհավորեց մրցանակակիրներին՝ մասնավորապես ասելով. «Հետաքրքրությամբ հետեւեցինք այն քննարկումներին, որ ծավալվեցին սոցիալական ցանցերում եւ այլ հարթակներում: Նախեւառաջ դա խոսում է նախագծի հետաքրքրության ու արդիականության մասին: Ինչպես արդեն բազմիցս ասել ենք, Orange գրքի մրցանակն ավելի շուտ ոչ թե գրական մրցանակ է, այլ ընթերցողի եւ գրքի սիրահարների մրցանակ: Մենք այս ընթացքում արեցինք հնարավորը՝ հանրային ընթերցանությունների, քննարկումների միջոցով խթանելու հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ: Ընթերցողներն արեցին իրենց ընտրությունը, եւ մենք երջանիկ ենք աջակցել, որպեսզի նրանց ընտրած ստեղծագործությունները դառնան գիրք»:

Հիշեցնենք, որ մրցույթին մասնակցել են նրանք, ովքեր ստեղծագործում են հայերենով, ներկայացրել են նախկինում չհրատարակված գրական երկ եւ մշտապես բնակվում են Հայաստանում: Մրցույթին ընդհանուր թվով մասնակցել է 130 ստեղծագործություն:

Առաջին փուլի արդյունքներով ժյուրիի անդամները պետք է ընտրեին առավելագույնը չորս ստեղծագործություն յուրաքանչյուր ժանրում, որոնք էլ երկրորդ փուլում ներկայացվեցին ընթերցողների լայն զանգվածների դատին:

Հեքիաթ եւ սցենար/դրամատիկական գործ կատեգորիաներում ժյուրիի բարձր գնահատականին արժանացել են միայն մեկական գործ, որոնք էլ ավտոմատ կերպով դարձան տվյալ անվանակարգում հաղթող: «Վեպ», «էսսե» եւ «պատմվածք» անվանակարգերում հաղթողներն ընտրվել են Orange-ի վեբ կայքում՝ www.orangearmenia.am/book-prize ընթերցողների առցանց քվեարկությամբ, որտեղ ընթերցողները քվեարկել են դուր եկած ստեղծագործության օգտին Facebook սոցիալական ցանցի միջոցով՝ սեղմելով յուրաքանչյուր ստեղծագործության մոտ հասանելի like կոճակը:

Մրցույթի նպատակն է խթանել հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բացահայտել ժամանակակից հայ գրողներին, օրեցօր զարգացող էլեկտրոնային մեդիայի միջոցով տարածել նրանց ստեղծագործությունները ընթերցողների առավել լայն զանգվածներին: Այս նախաձեռնությամբ Orange-ը նաեւ պատրաստվում է Երեւանի հետ միասին նշել գրքի եւ ընթերցանության տոնը՝ ընդառաջ գնալով 2012թ., երբ Երեւանը կդառնա գրքի համաշխարհային մայրաքաղաքը: Orange գրքի մրցանակը կազմակերպվում եւ իրականացվում է «Հայ գրքի կենտրոն» հասարակական կազմակերպության հետ:

*Հավելյալ տեղեկությունների համար՝ http://orangearmenia.am/book-prize/:*


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամը (ՀԱՀ) հայտարարում է Հայաստանի ամերիկյան համալսարանի գրադարանի ընդլայնման եւ ճաշարանի վերակառուցման շինարարական աշխատանքների մրցույթ:

Մրցույթին կարող են մասնակցել այն շինարարական կազմակերպությունները, որոնք ունեն համապատասխան լիցենզիա եւ աշխատանքային փորձ:

Շահագրգիռ հայտատուները կարող են ծանոթանալ մրցույթի պայմաններին 16/11/ 2011 ից մինչեւ 25/11/ 2011 հետեւյալ հասցեով. ՀՀ, ք. Երեւան, Մ. Բաղրամյան 40,

**Հեռ. (+374010) 51 25 09, e-mail: gkarapet@aua.am**

**www.info@aua.am**

Մրցութային փաստաթղթերի ամբողջական էլեկտրոնային փաթեթը հետաքրքրված հայտատուները կարող են ստանալ վերոնշյալ հասցեից, գրավոր դիմում ներկայացնելով եւ ՀԱՀ-ի հաշվապահությունում 5000 ՀՀ դրամ վճարելուց հետո: Մրցույթը կանցկացվի մեկ փուլով, որից հետո, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) պահանջներին համապատասխան, կկնքվի պայմանագիր Հայաստանի ամերիկյան համալսարանի եւ մրցույթի հաղթող կազմակերպության միջեւ:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը կազմակերպության աշխատակիցների համար ճաշարան կազմակերպելու նպատակով վարձակալությամբ տրամադրում է տարածք՝ ք. Երեւան, Իսակովի 24 հասցեում գտնվող երկրորդ մասնաշենքի նկուղային հարկի ազատ սենյակը, որի ընդհանուր մակերեսը կազմում է 35,4 ք.մ.:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 77-77-10 (222) հեռախոսահամարով կամ դիմել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ք. Երեւան, Իսակովի 24 երկրորդ հարկ 16 սենյակ հասցեով:

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ*


# Դավիթ-Բեկ բնակավայրը՝ ականազերծված

**Հրադադարի հաստատումից հետո արդեն 17 տարի հանրապետության ավելի քան 60 բնակավայրերի հարակից տարածքներ շարունակում են մնալ ականապատված: Կասկածելի տարածքների թիվը գերազանցում է 100-ը՝ զբաղեցնելով 322 կիլոմետր քառակուսի մակերեսով տարածք: 1994-ից ականներից եւ չվնասազերծված զինամթերքից տուժել է ավելի քան 400 մարդ, որից 112-ը՝ մահվան ելքով:**

**Հայաստանի գերատեսչությունները միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ ամեն տարի ականազերծման աշխատանքներ են կատարում: Դրանք նվազեցնում են չվնասազերծված զինամթերքի պայթյունի հետեւանքով դժբախտ պատահարների հավանականությունը, նաեւ ավելանում է գյուղատնտեսական հողատարածքների թիվը:**

**Հանգստյան օրերին Սյունիքի մարզի Դավիթ-Բեկ բնակավայրն ու հարակից տարածքը պաշտոնապես հայտարարվեցին ականազերծված: Հավաստագիրը Հումանիտար ականազերծման եւ փորձագիտական կենտրոնի տնօրեն Ռուբեն Առաքելյանը հանձնեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին: Ռուբեն Առաքելյանի ներկայացմամբ՝ ականազերծման աշխատանքները սկսվել են գարնանը: Ականազերծվել է 21 հեկտար հողատարածք, վնասազերծվել են ռումբեր, փամփուշտներ, հականավային եւ հակահետեւակային ականներ:**

**Հ. Հ.**


Սարերի գարունը մեկ գավաթի մեջ
ՍԱՐԻ ԹԵՅ
ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ
MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ
25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը
Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-


Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.11.2011, գինը՝ 100 դրամ, տպագրուած է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: